

3963, 3964
3965, 3966

281.63
U-37

9

No 15

1/2 Hft. ungen.

Erst 1/2 Hft. ungen.
1885.

2010

2.125

unten 1/2 Hft. ungen. 2.125
un. 1/2 Hft. ungen. 2.125

1/2 Hft. ungen. 2.125

1/2 Hft. ungen. 2.125

1/2 Hft. ungen. 2.125

4. Hft. ungen.

2001

2-28

(ՀԻՆ ՉԲԱՅՅ)

9. 1. 6. 8

ՕՐ. ԾՈՒԾԱՆԻԿ ԶԱՄԲՈՐԵԱՆՑ



Þ H S L T U

ՏՊԱՐԱՆ ԽՈՎԹԻՄԻ ՎԱՐԴԱՆԵԱՆՑ

1885

$$\begin{array}{r} 1004 \\ \hline 18953 \end{array}$$

11072
J J W J J U K O J

(88072 242)

8 3 7 4

88072 242



Доз. Цензурою, 6 Декабря 1885 года. Тифлисъ.

Тип. М. Вартамянца, Тройц. пер., д. № 11.

U J J 8 1 9

88072 242

2881

ԻՆՏ ԵՆՈՐՐԻՔ ՎԱՂԱԹԱՌԱՍ

ԳԵՈՐԳ ԴԵՄԻՐՃԵԱՆՏԻ

ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ՖԻՇԱՏԱԿԻՆ

ՆՈՒՐՈՒՄ Է

88072 242

ԵՐԿԱՍԻՐՈՂԸ

Այս փոքրիկ աշխատութիւնը 'ի լոյս ածելով երկու նպատակ եմ ունեցել, մինը՝ Հայ ազգիս երկուց սեռից մատաղ սերունդներին ընթերցասիրութեան և բարոյական զարգացման նպաստել այսպիսի ժողովրդական ընտիր վէպերով, և միւսը՝ զըջուկիս արգիւնքով իմ կարեաց չափով նպաստել Վաղարշապատայ Հայոց Օրիորդաց դպրոցին՝ և հանգուցեալ Ա. Արարատեան ուսուցչիս կարօտ ընտանիքին հաւասար բաժին անելով, որոյ համար ևս կ'յուսամ իմ սիրելի ազգայինքս կրկնակի երախուսանք չեն զլանալ:

ՕՐ. Հ. ՀԱՄ-ՔՈՐԵԱՆՑ:

ԼՈՒՍԱՆՄԱՆ

Ա. Գ. Լ. Ռ. Խ:



Լուսանմամբ գետի աջ ափում, Ծաղկադաշտի վերայ գտնվում էր Ե. գիւղը:
Հին ժամանակում այդ գիւղը անուանի էր իր հարստութիւնով ու կտրիճ մարդկանցով: Բնակիչները պարապում էին երկրագործութիւնով և որսորդութիւնով: Այն ժամանակուան լուսաւոր աշխարհից ծածուկ՝ մի ասպարէզ էր ներկայացնում այդ գիւղը. արկածներ, կռիւներ, նախապաշարմունք ու տգիտութիւն տիրում էին նորա մէջ: Մեծ շէներից ու քաղաքներից հեռու էր նա. Խրամը առջևից վշվշալով անցնում էր, երեք կողմից խոշորատեսիլ լեռներ էին բարձրանում. արևմտեան կողմի մի ձորակից սկսվում էր անտառը և քանի գնում՝ խտանում, ահարկու էր դառնում... Այդ գիւղը եկեղեցու փոխանակ մի տախտակաշէն ծածկոց ունէր. սորա մօտն էլ մի գիւղական կոյս վարպետ սրահի մէջ մի խումբ աղջիկների կարգացնում էր: Աղջիկների մէջ մեծը և յառաջագէտը Լ. ու ս ա ն մ ա ն ն էր:
Լուսանմանը ծնողաց միևնուճար աղջիկն էր: Նորա հայրը որքան բարի նոյնքան վայրենի, նոյնքան սառնասիրտ էր. բայց մայրը միանգամայն առաքինութեան և բարեսրտութեան օրինակ էր:

Սա էր՝ որ դէմ գնելով մարդուն՝ իր միակ աղջիկը կարգացնել էր տալիս: Այս իսկ պատճառով անգուլթ մարդը խեղճ Հնազանդին՝ Լուսանմանի մօրը, հալումու մաշում էր իր կոպիտ վարմունքով և յաճախ ծեծում էր խեղճ կնոջը: Չլէքք ընկաւ նա և արգարներ ընկեր դարձաւ երկնքում: Անգուլթ է աշխարհը, հէնց որ մինը մեռնում է, նոր են ափսոսում...

Բ. Գ Լ Ո Ւ Խ:

Լուսանմանի գեղեցկութեան մասին խօսք չունիմ. արդէն իր անունը տալիս է այդ բացատրութիւնը: Օրօրոցի հասակից նա գեղեցիկ էր. մի քանի տարուց յետոյ նորա բոլորակ պատկերը լուսնի նման փայլում էր: Նորա համեստութիւնը, առաքինութիւնը, աղաւնու անմեղութիւնը, որ տիրում էին նրա քնքշիկ սրտին, Լուսանմանին գերադասում էին միւսներից. նորա վարմունքը, բնութիւնը, զգացմունքը, ուշիմ խելքն ու միտքը, քաղցր և դեռ թոթովախօս լեզուի հետ արտայայտում էին նորա ներքին զգացմունքները... Այդ ամենը արտաքուստ շողշողում էին և շատ մարդկանց երանի տալ տալիս, որ մի այդպիսի գաւազակ ունենային: Այս բոլորը իր հանգուցեալ մօր բնական հարստութիւնն էր, որ զոյգ ձեռքով յատ-

կացրել էր իր դստրիկին: Ի նկատի ունենալով այս ամենը և միւսնոյն ժամանակ յիշելով առաջ ժամանակի դէպի իւր կինն ունեցած զրպարտող կասկածները, որ յատուկ է անկիրթ մարդկանց, Աւետիքը՝ Լուսանմանի հայրն իր մտքում այլ կերպ էր բացատրում, նա մտմտում էր, որ Լուսանմանը իր արիւնից մասը չունի. ուրեմն և իրանը չէ: Ենթադրելով այս ամենը, գալիս էր հաստատ համոզմունքի և աւելի ատում էր նորան՝ զուրկ պահելով ամեն տեսակ կենսական կազդուրիչ պիտոյքներէ... Նա Լուսանմանին զրկեց կարգալուց: — Ո՛չ, ես պէտքէ նորէն ամուսնանամ, սեփական ժառանգներ ունենամ, որ ինձանից յետոյ տիրեն իմ ստացուածքին: — Այս մտադրութիւնը հաստատ էր և արդէն վճռել էր, որոնում էր կին, այն էլ՝ մի սիրուն, շատ սիրուն կին... — Բայց Լուսանմանը. նա էլ թէ կրմեռնի, կըթաղեմ, թէ կ'ապրի՝ կը պահեմ...

Աւետիքը միջին կարողութեան տէր մարդ էր. ունէր եղներ, զոմէշներ, կովեր և այլքի: Աւետիքի ձայնը նշանակութիւն ունէր գիւղում. նորա կոպիտ վարմունքից շատերը վախենում էին և աւամայ լսում նորան... Նա սիրում էր ժլատ աղբել. իսկ սորա ու նորա սեղանի վերայ նա շատ առատ էր: Հանգուցեալ կինը եթէ աղքատի կամ չքաւորի օգնում էր իր կենդանութեան ժամանակ, միշտ ծածուկ էր անում, որ բռնի արջը բան չիմա-

նայ: Դու ես աշխատել, որ ցրվում ես: Գնա՛ կամ լետ
 առ, կամ կը մեռնես: Ահա թէ քնչ էր կրկնում
 այլը՝ այսպիսի ղեպքերում: Կուպիտ Աւետիքը դեռ քառասնամեայ տղա-
 մարդ էր: Եւ մեր խեղճ որբիկը՝ Լուսանմանը
 մնաց նորա յուսով: Երեւակայեցէք այժմ մեր քու-
 ըրկի դրութիւնը: Նա ոչ թէ միայն իր աշխատանքի
 վարժապետահուհուց հեռացաւ, այլ և ծանր աշխա-
 տանքների տակ ճնշուած էր: Հայրը նորան փախ-
 էր կրել տալիս անտառիցը՝ մեծ կժով ջուր էր
 բերել տալիս աղբիւրիցը, ազդումը մատն էր հաւա-
 քել տալիս նորան: ...
 — Դու քո մօր բնութիւնը չը պէտքէ ունենաս.
 ինչ նման պէտք է լինես, այսպ թէ ոչ՝ քեզ փայ-
 տով խելքի կը բերեմ: ...
 Լուսանմանը չէր նեղանում, որ ինքն այժմ
 աշխատանքի ծանր լծի տակ է. նա գիտէր, որ
 տան տիկնոջ գործն այժմ ինքը պէտք է կատարէ,
 այլ և հօրը աջակցի միւս գործերում, բայց մօր
 կորուստը, հօր կուպիտ վարմունքը նորա քնքուշ
 ու անմեղ սրտին ցաւ էին դառել: Իմ հայրը եթէ
 մօրս հետ լաւ վարուէր, ասում էր ինքն իրան
 շատ անգամ, անշուշտ այժմ կենդանի կը լինէր նա:՝
 Այսպէս երբ պարապ միջոց էր գտնում Լուսա-
 նմանը կարգում էր իր գրաբառ ընթերցարանը և
 ոչինչ չը հասկանալով կարդացածից՝ դարձեալ նա
 հոգեպէս մխիթարվում էր:

Լուսանմանը լացից չէր կշտանում: Նորա մօր
 գերեզմանաթումբը երեկոյ-առաւօտ թրջվում էր
 նորա տաք արտասուներից: ... Իր նման փոքրիկ աղ-
 ջիկները միայն լետ էին քաշում նորան մօր գե-
 րեզմանից՝ միւս ազգականները հօ ահու չէին մօ-
 տենում նորան: Բայց ոչ մի բան նորա սիրտը
 այնքան չէր հովացնում, ոչինչ չէր հեռացնում
 իրանից իւր մօր չքնաղ պատկերը, որքան իր
 հնարած ողբը, իր տխուր երգը: Հեռուից լսողի
 սիրտն էլ էր փուլ գալիս, բայց կոպիտ հայրը շատ
 անգամ նորան ողբալիս տեսնելով՝ վայրենի կատա-
 ղութիւնով յարձակվում էր նորա վերայ իւր կը-
 նոջ անշուք գերեզմանի մօտ և գնում: — «Դու ևս
 մեռի՛ր, էլ չըլսեմ քո գլխակեր ձայնը»: Եւ այդպէս
 անպատուելով տուն էր քաշ տալիս: ...
 Գ. Գ. Լ. ՈՒԻՒ.
 Ասած է. — «Այլը որ շուռ գալ՝ ճամբէն բաց
 կը լինի»: Լուսանմանի մայրը որ մեռաւ, Արեւ-
 տես այլի կնոջ բաղտը բացուեց: ...
 Արեւտեսը Ե. գիւղում յայտնի կին էր:
 Նա այնքան ինքնասէր ու պճնասէր էր, որ ոչ ոք
 չէր կարող նորա դէմ մրցել այդ մասում: Խեղճը
 իրան երեւակայում էր մի մեծ ոմն. ամենագեղեցիկ

ոմն... Շատ անգամ այդ շինծու փայլը կատարելապէս զրկում էր նորան իր բնական ունեցածիցն էլ: Նա գեղեցիկ կին էր, բայց իր երեակայացածի չափ չէր. հագնում էր միշտ մաքուր, շատ քիչ անգամ էր տգեղների հետ խօսում, ման էր գալիս օրօրուելով և ուսերքը շարժելով, ճիգն էր թափում իրան գրաւիչ կացուցանել ամենքի աչքում: Այս բնաւորութիւնը շուտ և գուցէ անժամանակ մահացրեց իր բեռնակիր ամուսնուն, որի խրատներին Արեւտեսը երբէք նշանակութիւն չէր տուած... Ամենայն առաւօտ նա շաւ փաղ էր զարթնում և կտերը կանգնած այնքան սպասում էր՝ որ արեւը ծագելիս տեսնէ. հէնց այստեղից նա ստացաւ իւր անունը՝ ծաղրածու մարդկանցից: Նորա հասակը միջակ էր. տասներկու տարի կին լինելով մի հասարակ մարդու, նա չունեցաւ ոչ մի զաւակ:

Արեւտեսը չէր սիրում աշխատանքը և միշտ արհամարհական գորոզութեամբ էր նայում աշխատող ձեռքերին: Նա զրոյց էր անում այնպիսի այլ մարդկանց հետ, որոնք այլի էին: Նա մտադիր էր նորէն կին լինել հարուստ ու միայնակ մարդու, որ ինչպէս ուզենայ, այնպէս էլ լվլվար կարողութեան մէջ: Արեւտեսը ինքն իրան հրատարակել էր Լուսնի շրջանի անունը. այսինքն՝ նա սիրտն ուղած ժամանակը իբր թէ լուսնեակի հետ խօսում էր և պատասխան ստանում: Գիւղացիք էլ հաւատում

էին, թէ և ոչոք չէր տեսած այդ բանը: Այս իսկ պատճառով նորան յիմար մարդիկ և կանայք աւելի էին յարգում: Եթէ մէկը նորան հաւանութիւն էր տալիս, նա հնդկահաւի պէս փքվում, քիչ էր մնում՝ տրաքի, բայց երբեմն էլ հակառակողին նա սպառնում էր լուսնի անուհով: Ամենքն էլ ճարահատած գովում էին: Այս տարօրինակ կինը այդպէս ինքնասիրութեան ու հպարտութեան ցփի մէջ խեղտուած լինելով, աճել, լցուել ու անչափ դերացել էր: Ծածուկ մարդու էր աչք ածում, բայց երեսանց՝ ճգնաւոր մնում: Գաղտնիքը իմացաւ նորա անբաժան տաքըր և անչափ զգուած լինելով նորա փայլմունքներից, հրապարակաւ ուզեց դուրս անել նորան: Եւ որովհետեւ նա կախարդ ու զարքնիկեց բարեկամներ շատ ունէր, այդ միջնորդներով հանգստացրեց տաքըրին, խոստանալով, որ շատ շուտ ինքն իր կամքով դուրս կը գնայ:

Գիւղացի կանայք երբ Լուսանմանի գեղեցկութիւնը գովում էին, նա նեղանում էր ու խռովում.— Ինչի՞ պէտք է Լուսանմանն ինձանից բարձր անուն ունենայ իր սիրունութիւնով,— կռվում էր շատ անգամ ինքն իրան:— Ես նրա խորթ մայրը կը դառնամ ու նրան կը կորցնեմ... Նրանց տունը ինձ շատ ձեռնտու է:

Կոյրն թնչ կուզէ,— աչքի լոյս: Լուսանմանի հայր— Աւետիքն էլ վաղուց նրան աչք էր դրել:

Գ. Գ Լ Ո Ւ Խ:

Սարմիր արև էր: Խրամ գետը ուժգին ձայն էր հանում, փրփրակալած քչքչում: Լուսանմանը գետի ափին նստած լաց էր լինում: Աւետիքն ու Արևատեսը այժմ մարդ ու կին են:

Տան մի անկիւնում ծուկի ծնկի նստած՝ խօսում էին՝

— Իմ հոգի, ասում էր կինը կախարդութեամբ, Լուսանմանը քոնը չէ, քոնը դա ապօրինի է, լաւ իմացիր, գրան կորցրո՛ւ, թէ ուզում ես՝ ես ու դուն սիրով ապրենք, ժառանգներ ունենանք, քո օջաղը հալալ է, նա հարամ. ինձ էլ վնաս է, քեզ էլ, օջաղին էլ:

— Ախր ո՞նց կորցնեմ, չէ՞ որ իմ զաւակն է:

— Տար մեծ թափի միւս կողմի անտառում թո՛ղ, Աստուած իր հետ, կուզի ապրի, կուզի մեռնի: Յետոյ մենք կորոնենք, որպէս թէ ինքն իրեն է կորել: Բայց իմացիր, քանի այդ խորթ աղջկը քո տանն է, մեր կեր ու խումը, մեր սէրն ու ծիծաղը հարամ է: Համաձայնիր, եթէ ոչ ես էլ այս գիշերից քեզ մենակ կը թողնեմ....

— Չէ. ես չեմ կարող. դու տա՛ր...

— Շատ լաւ, ես կը տանեմ: Բայց այնպէս պէտքէ տանենք, կորցնենք, որ ոչոք չը տեսնի:

— Ի հարկէ:

— Ուրեմն՝ հէնց այս առաւօտ շատ վաղվեր կենանք և մութը մութը նորան տանենք, որ ոչ ոք չը տեսնի:

Աւետիքը երկար ժամանակ վճռական պատասխան չըտուեց. բայց վերջը կինը յաղթեց, համաձայնացրեց և ապա մարդ ու կնիկ սկսեցին դարձեալ ամենայն ագահութեամբ իրարից վայելել արեւշատութեան գգուանքը: Լուսանմանի դատակնիքը կարգացին նորանք այնպէս, ինչպէս մի մրջիւնի կեանքի ոչնչացնելը: Այդ ամենից Լուսանմանը տեղեկութիւն չունէր: Լուսանմանի ցաւերը կրկնապատկուել էին՝ անգութ Յրևատեսի շնորհով: Ցասն օր էր, ինչ Արևատեսը խորթ մայր էր համարվում Լուսանմանին և դառը աշխատանաց տանջանքների էր ենթարկում նրան...

Ահա գալիս է Լուսանմանը գետի ափից՝ կուժն ուսին: Խօսողները ձայները կտրեցին, հէնց որ լսեցին ոտի թմփոցը...

Ե. Գ Լ Ո Ւ Խ:

Երկու օրից յետոյ՝ ճիշտ է, գիւղը գղրգոցն էր ընկել. սար, քուր, մարդ, կին — ամենքն էլ լիզու առած՝ խօսում էին, ափսոսում Լուսանմանի վերայ, որ նա կորել էր, որ նա գետն էր ընկել,

խեղտուել, որ նրան լաւ չէին պահում, ինքն իրան սպանել է... Արեւատեսն ու Աւետիքն դուրսը տը-
խուր էին երեւում, խնդրակներ ձեւանում, տանը
ուրախանում, խնդում, ծիծաղում...

Թողնենք այդ անպիտան ծնողներին, գնանք
տեսնենք ո՛ւր է մեր քուրիկը:

Այնտեղը՝ ուր թողել էին Լուսանմանին, շատ
հեռու էր գիւղից, ձիաւորը երկու ժամումը հա-
ղիւ կը հասնէր: Նայում ես չորս կողմդ ոչինչ չէ
երեւում, բացի սար ու քոլից, ծառ ու ծաղկից,
ծիտ ու ճուտից: Լսում ես արջերի մրմրթոց, գայ-
լերի ունոց... Ծառերի տակից հազիւ երկինքը
տեսնվում է: Ահա այստեղ էին թողել Լուսանը-
մանին: Ի՛նչ անաստուածութիւն է. ի՛նչ էր արել
ողորմելին, ի՛նչ մեղք ունէր, որ նրա կորստեան
պատճառ դարձան, որ նրան սպանելով չը սպանե-
ցին, բայց գայլերի ու արջերի բերանը ձգեցին, որ
պատառ պատառ անեն գեղեցիկ Լուսանմանին:
Բայց Աստուծոյ պահած գառանը գայլը չի ուտի.
Աստուած մեր Լուսանմանի հետ էր...

«Հայրի՛կ, մայրի՛կ»... նա գեռ ծառերի տակից
ձայն էր տալիս, լաց լինելով, կարծելով թէ դեռ
գտնելու է նրանց այնտեղ. վերջապէս, անտառի
խորքում մօլորուեց, մէնակ, թառամած ծաղկի
պէս: Նա մոռացաւ հայրի՛կ — մայրի՛կ կանչելը, սկսեց
իր բաղտի վրա տրտնջալ, լաց լինել...

Նորա կայտառ աչքերը կարմրել էին. նորա

շորերի պատառները թփերի, փշերի ծալրերին էին
մնացել, նորա ոտներից արիւնը կաթում էր... եր-
բեմն նստում էր, երբեմն գնում, ինքն էլ չը գի-
տէր՝ թէ ո՛ւր, երբեմն կանգնում, ինքն էլ չը գի-
տէր ինչի՞ համար, երբեմն խօսում, երբեմն երգում,
սարսափում, լուում... Նորա բաղտիցը արւն ամ-
պերի տակ ծածկուեց. որոտման ձայնը դղրդեց-
նում էր անտառը. բայց անձրեւ չէր գալիս. քա-
մին արմատից վայր էր գլորում դարաւոր կաղնի-
ներ...

Ամեն կենդանի իր որջը մտաւ. ամեն թռչուն
իր բնումն էր պատսպարվում. բայց մեր Լուսա-
նմանը տուն չուներ. նա զգում էր, որ օրը մթնում
է և աւելի էր վաղում մի օթեւան գտնելու, մի-
այն ուժ չուներ վայր էր ընկնում... Ափսոս աղ-
ջիկ... մի հաստ ծառի բնի վերայ, ձեռքը ծնօտին
դիմհար տուած կռթնեց, և ասալ երեք անգամ
երեսին խաչակնքեց, «Ո՛վ մայր, գալիս եմ քեզ
մօտ. ինձ համար սուրը ծոցումդ տեղ ունես. իմ
հոգեհանգիստը ես իմ բերանով կատարում եմ այժմ.
աղօթի՛ր, որ ընդունուիմ տիրոջ մօտ. իմ երգը գե-
րեզմանիս օրհնութիւնը թող լինի»... Այս խօս-
քերից յետոյ հեռուից ականջ դնող որսորդը այս
երգը լսեց՝ մեղմ և քաղցր ձայնով:

Կողտ հայրա խաբուեց,
խորթ մօրիցս զբառուեց

Երկուսն էլ ինձ բերին,
Անտառումը թողին:

Ո՛հ, այստեղ ինձ թողեցին,

Որ դալ ու արջ կերակրուին:

Վհայ եղէք ծառեր,

Վհայ կացէք լեռներ:

Հոգիս կը գնայ մօրս մօտ

Մարմինս քեզ կանանչ խոտ...

Զ. Գ. Լ. Ո. Ի. Խ.

Սար ու ձոր լուռեց. անտառը խլացաւ և ա-
լելի ահարկու դարձաւ: Արևը մօր ծոցը մտաւ.
բնութիւնը մեղմացաւ և միմիայն բարակ
ծառերի կատար շարժող զեփիւռն էր փչում...
Խորհրդաւոր կաղնի ծառը բազմաձիւղ կատա-
րից օրօրուելով սուգ էր քարոզում անմիաբան
ընկերներին: Մի մոլորուած, բուռն կորցրած, տարա-
մերժիկ թռչուն այդ ծառի կատարին նստած
ողբում էր:

Ամեն կողմից անգթութիւն էր փչում: Բայց
ո՛չ. արդէն կարեկիցներ եղան. տէրը ուղարկել էր
մեր Լուսանմանի համար ազատիչներ: Դոքա տուն
վերադառնող երկու անձանք թափառական որսորդ-
ներ էին, որ լսելով նորա սգաւոր ձայնը՝ կամաց

կամաց մօտենալով՝ դտան նորան թուլացած,
զուռնաւորած և կանաչ խոտի վերայ փռուած...

Ամբողջ մէկ ժամ որսորդները չարչարուելով՝
հաղիւ նորան ուշքի բերին:

«Վայ... էս սուր եմ. Աստուած ջան...»

— Խեղճ աղջիկ, վրաբերեց մեծը. քնքշաբար
բռնելով ձեռքը:

— Որտեղից ես, ու՛մ աղջիկն ես աս, հար-
ցրեց միւսը, նորան զրկած:

Բայց Լուսանմանը խօսելու լեզու չուներ:

— Քաղցած եմ... Սիրտս... Ո՛հ...

Նորան հաց ու որսի խորուած միս տուին,
ապա տարան մօտիկ առուի մօտ, որ ջուր էլ խմի:
Քառորդ ժամից յետոյ՝ Լուսանմանը բոլորովին
ուշքի եկաւ և նորա գոյնը փայլփլում էր:

— Ի՛նչ անենք, վրաբերեց մեծը փոքր ընկե-
րոջը մի քանի քայլ հեռու կանգնած, սրան սուր
տանենք...

— Ինչքան զեղեցիկ է. ասաց փոքր ընկերը:

— Ինչ էս շվարվում. այ մարդ. սրան բաւա-
կան է իւր նեղութիւնը. Աստուած երևի սրա հետ
էր, որ մենք պատահեցինք, սա Աստուծոյ պահած
դառն է:
Փոքր ընկերը մնաց շփոթութեան մէջ:

— Եթէ սորան մենք իրանց տունը հասցնենք.
մեզ կը դատապարտեն. արի՛ տանենք մեր ծանօթ
աւազակներին նուիրենք. միտդ է, որ նրանք

միանգամ մեզնից տան կառավարիչ խնդրեցին. տանենք նրանց մօտ, ես յոյս ունեմ, որ նրանք լաւ կը պահեն սրան:

—Քո կամքն է, մեծ ընկեր. հաղիւ կմկմաց փոքրը:

Լուսանմանը այս պատմական գրոյցից առաջ արդէն իւր պատմութիւնը արել էր ցաւալի խօսքերով, որ թէ ինքն ինչպէս մօլորուել է անտառի խորքում: Բայց և այնպէս, նորա պատմութիւնից հասկացան ազատիչները՝ որ ոչ թէ մօլորուել է, այլ մօլորեցրել են... Հէնց սորա համար էլ երկիւղ կրեցին Լուսանմանին իրենց ծնողներին հասցնելու. միւս կողմից ևս իրենց շահերին ձեռնտու չէր: Որսորդները յիշած աւագակների հետ միշտ յարաբերութիւն ունէին և շահվում էին նրանցից:

—Այժմ կարող ես մեզ հետ ոտքով գալ, աղջիկ:

— Ո՛ր:

—Մի լաւ տեղ:

—Կը գամ—ասաց ու տեղիցը կանգնեց:

Նրանք ճանապարհ ընկան պայմանաւորեալ տեղը՝ ամենանեղ քարանձաւներով անցնելով: Լուսանմանի ձեռքը բռնել էր փոքր ընկերը:

Սրդէն մութն էր:

—Ի՛նչ ասացէք է՝ իմ եղբայրներ, ինձ ուր էք տանում—վերջապէս կմկմաց Լուսանմանը կէս ճանապարհին:

—Ուր պէտքէ տանենք, բարի աղջիկ, որտեղ կը հաւանես, այնտեղ կը թողնենք քեզ, պատասխանեց մեծը սրտի հաճութեամբ:

—Մենք անտառից չենք ազատվում, մի՞թէ կարելի է անտառին հաւանել կամ այս մթութեան մէջ ես թնչ եմ տեսնում, որ ինչ հաւանեմ. պատասխանեց աղջիկը: Իմ սիրտը դեռ դողում է. ես վախենում եմ...

Ինչ էս վախում, մենք քեզ հետ ենք, քո լեզուով խօսում, քո հաւատի մարդիկ ենք:

—Որ գալ գալ, թնչ կանենք, լսում էք ունում են...

—Միամիտ կաց, ասաց երկրորդը. հապտ տեսնում ես այս դաշոյնը, երկար ու պսպղուն հրացանը: Աստուած անի մի արջ պատահի, գոնէ մորթին կը վերցնենք և գո՛ւ աղջիկ, կը տեսնես, ինչպէս մենք կովում ենք գաղանների հետ:

—Վո՛յ. Աստուած ոչ անի ես կը վախեմ— ասաց ու փաթաթուկեց իւր ուղեկցի փեշերքովը:

Այսպէս խօսելով նոքա ամբողջ երեք ժամ շարունակ առաջ գնացին:

—Ահա, սիրելի, հասել ենք. շատ շուտով դու մի մեծ տուն կը մտնես, կունենաս քառասուն եղբայրներ, վերջապէս խօսեց մեծ ընկերը:

—Յետոյ մեր տունը:

—Այնտեղ դու կը մնաս այնքան, որ մենք

կը գնանք ձեր գիւղը՝ քո հօրը կասենք քո տեղը՝
որ գայ քեզ տանի: Լաւ չի լինիլ:

— Շատ շնորհակալ կը լինեմ: Բայց ինչի՞ հիմի
ձեր հետը չէք տանում:

— Մենք առաջ ուրիշ տեղ պետքէ գնանք:
Հինգ օրից յետոյ հազիւ ձեր տուն գնանք, դու
մեզ հետ չես կարող ոտքով ճանապարհ կտրել...
հրէ հա. տեսնում ես ծառերի տակից այն լոյսը.
այնտեղ պետք է գնանք, մօտ է, չէ:

— Այո մօտ է, գնանք:

Այսպէս զրոյց անելով նոքա հասան լոյս
երևող տեղը:

Բայց ինչ էր նա, լոյսը՝ լոյս էր իսկապէս,
պատուհանից թափանցած, շինութիւնը զարմա-
նալի: Թէ և հին մի կողմը քայքայուած, բայց
դեռ հոյակապ քարաշէն պալատ էր ներկայացնում
տեսնողին: Պալատը ունէր շրջապատ: Մենք նորան
պալատ անուանեցինք: Բայց շատ կարելի է նա
'ի հնումն եղած լինէր վանք, անապատ կամ մի
այլ ազգային իջևան. պարիսպն ամուր և երկու
երկաթէ դռներ ունէր: Իջևան եմ ասում ճանա-
պարհորդների համար շինուած մեր ջերմեռանդ
պապերից, ուր ամենայն պիտոյք հոգացվում էր
ձրիապէս:

— Ահա այստեղ պետք է լինի քո տունը, քո
մնալու տեղը. մինչև որ քո հայրը կը գայ քեզ կը-
տանի:

— Բայց իմ եղբայրներ, այստեղ ո՞չք են բնակ-
վում, այսպէս միայնակ. ուհ. ինչ տխուր է այս
տեղ... —

— Սա վանք է, վարդապետ էլ կայ, երեկոյ
առաւօտ ժամ են ասում, միաբանութիւն կայ, քեզ
լաւ կը պահեն...

Լուսանմանը վանքի, միաբանութեան անունը,
ժամ ասելը լսելով՝ մի տեսակ ուրախութիւն զգաց,
նա իսկոյն իր գրքերը լինեց...

— Ինչ լաւ կը լինի է, ես էլ ժամ ասել կը
սովորեմ, միշտ գիրք կը կարդամ, աղօթք կանեմ...

— Մեզ համար էլ աղօթք կանես, վրաբերեց
մեծ ընկերը ծիծաղելով:

— Ի՞նչի չէ. եթէ դուք չը լինէիք, գիտէք որ
ես այժմ մեռած կը լինէի:

Այսպէս խօսելով նոքա կանգնած մնացին
պարսպի պատի տակին: Մեծ ընկերը փայտէ կեռ
բանալին հանեց սլափի ճեղքից՝ այնպէս զգոյշ, որ
աղջիկը չը տեսնէր, դուռը լանկարձ չխկչխկացնե-
լով բաց արեց և ներս մտան:

— Տեսնում ես, աղջիկս, այժմ դու էլ չես վա-
խիլ, այստեղ վանք է, մարդիկ կան տեսնում եո,
այն կողմում էլ շներ կան կապած, որ հաշում
են...

Դէ բարձրացիր և մտիր միջին տունը. մենք
այստեղ կը սպասենք:

— Կը վախեմ:

— Ո՛չ, մի վախիլ, բարձրացի՛ր, դուռը բաց է-
ոչ ով չկայ այնտեղ...

— Ձեմ կարող.. Հեկեկալով ասաց Լուսանմանը:

— Դէ ինձ հետ արի:

Մեծը նրա թևից բռնած՝ ներս տարաւ:

— Ի՞նչ ախտեղ կաց այժմ, ես գնամ վարդա-
պետներին իմացնեմ որ գայ. ասաց ու դուրս գնաց:

Լուսանմանը միայնակ մնաց ներսը, կամեցաւ
դուրս ընկնել. բայց պարսպի դուռը չխկչխկալով
փակուեց և գաւիթում շները իրար ուտում էին,
հաջում, ոռնում. էլ չը կալին որսորդները:

Է. Գ. Լ. ՈՒԽ:

 Բնութեցող, երևակայում եմ, եթէ ինձ էլ աչ-
քերս կասլած, խեղճ Լուսանմանի նման
խաբեբայական հնարքներով, տանէին և ձգէին մի
կեղծ վանք, որ իսկապէս վանք չէր, հեռու ծա-
նօթից, ազգականից ու ծնողից, թնչ կը լինէր իմ
դրութիւնը: Երևակայում եմ և այժմէն խղճում
Լուսանմանի, այն կոկոմ, միամիտ աղջկայ վերայ:
Սակայն աշխարհի մարգիկը նուրբ զգացողութիւն
չունին կարեկցելու. ամեն բան նրանց համար թե-
թե է թվում. պէտք է ընկնել և տեսնել. զգալ,
հասկանալ և ապա թէ խօսել...

Այժմ ամեն աեղ մութն է ու գիշերային

թանձր խաւար է. բայց Լուսանմանի առաջին՝
մեծ երկար սեղանի վերայ եօթը ճրագ վառվում,
լուսաւորում են ընդարձակ դահլիճը...

Լուսանմանը մնացել է նստած, դեռ սպա-
սում է վարդապետին: Հետաքրքրութեամբ երկար
նայելով, դիտելով ամենայն ինչ՝ ոչինչ վճռական
վիճակի չը հասաւ: «Միթէ վարդապետը սուր ու
թուր կունենայ, հրացան ու վառօդաման կու-
նենայ»— յանկարծ ձայն տուեց նա, սարսափելով
տեսած առարկաներից. Աստուած իմ, թնչեր են
շարած պատի ճակատից... Տէր դու ազատի այս-
տեղից, ասելով դուրս նայեց և խաւարը տեսնելով,
դարձեալ տուն ընկաւ: «Ախ Աստուած, արգեօք
կորած եմ, թէ կայրեմ»... խեղճը թնկնեց նստա-
րանի վերայ և թմրած մնաց:

Ես ձեզ աղնիւ ընթերցողներ, չը ծանօթա-
ցրի պալատի ներսի հետ: Նորա արտաքին տեսքը
զարհուրելի էր, իսկ ներսը շլացուցիչ: Դահլիճը
մեծ էր: Քառասուն մահճակալներ աջ ու ձախ
դարսած էին. քառասունի չափ հրացան պատերից
կախ. քառասուն պահարաններ՝ դռները բաց. անօթ-
ներ, բաժակներ ու այլ տեսակ տնային կահկարասիք
խառն ու փնթոր ածած՝ այստեղ ու այնտեղ...
Դահլիճը աղտոտ: Լուսանմանը յանկարծ ուշքի գա-
լով կարծես, երազում հասկացաւ, որ իր անելիքը
անի, ամեն ինչ իր տեղը դրեց, կանոնաւորեց.

տունը մաքրեց, աւելեց յատակը, մի ճրագ վառ
թողեց, միւսները հանգցրեց...

Այդ միջոցին դղրդոց եկաւ դրսից: Նա վախից
դողդողաց և մտաւ մի պահարանի մէջ, դռները
փակեց: Քառասունի չափ մարդիկ ուրախ ուրախ
ներս թափուեցին գանազան որսեր ներս բերելով:

Գլխաւորը գոռաց. « Ո՞վ ես, մարդ ես, շուն
ես. գազան ես... » ընկերները ծիծաղելով վրաբերին.

— Ի՞նչ ես ասում Հախման, ոչ ոք չը կայ...

— Չէ, մարդ կայ տանը...

Լ. Գ. Ա. Ո. Ի. Խ:

 Այրենի մարդու, Հախմանի ձայնից թնդաց
դահլիճը, թռթռաց Լուսանմանի սիրտը,
դողաց նրա ջանը:

— Աչք ածեցէք, ո՞վ է, կրկնեց գլխաւորը:

— Ես ոչինչ չեմ հասկանում, պարսպի դռ-
ները փակած՝ ո՞վ կարող էր մտնել այստեղ, խօսեց
անտարբերութեամբ երկրորդը:

— Ի՞նչ ես ասում, վրաբերեց չորրորդը, տան
մէջ ամեն բան խառն ու փնթոր ածած էր, չէք
տեսնում, որ ամեն բան այժմ կարգ ու կանոնով
դարսած, իրենց տեղերն է դրած: Նօթը ճրագից,
որ ես եմ այս երեկոյ վառել, մինն է վառ թողած՝

միւսները գիտութեամբ հանգցրած է: Չէ, հաւատա-
ցէք, այստեղ մտնող է եղել:

— Ով որ է՝ մեզ բարեկամ է...
— Բոլորովին այդպէս, վերմագ, բայց և այն-
պէս տեսէք մենք բոլորս էլ այստեղ ենք — ասաց
գլխաւորը:

Բերսիցն էլ տուն թափուեցին...

Մեր Լուսանմանը ամեն խօսք լսում էր. ամեն
ձայն նորա ականջին էր ընկնում... Իւր բան-
տային պահարանում նա տրորվում էր և օրօրվում,
ինչպէս տերև՝ սառը քամու հոսանքի առաջ. նորա
ականջները խշշում էին, նա ամբողջ մարմնով
դողում, սրտում էր. ամեն խօսք լսելիս նա թնչ
էր մտածում. շատ բան: Բայց և մտածելու ընդէ
չէր գտնում. խօսողը սիրտն էր և թնչ, միայն
տրոփում, լեզուն փորն էր ընկել. թնչ. սրի պէս
շամփրոտում էր: Կամաց կամաց նրա լսողութիւնն
էլ շփոթուեց. ամեն ձայն անասնային աննշան
հնչիւններ էր կարծում... Հազիւ թէ նա կարո-
ղացաւ լիշել սովորական ճնճղուկին, օտի, երանի
թէ ճնճղուկ դառնայի, կմկմաց նա մտքումը, վան-
դակս փշրէի, պատուհանով դուրս թռչէի»...

— Ամենքս էլ այստեղ ենք, Հախման, վերջա-
պէս պատասխանեց Վերմագը. կարելի է մեզ հիւր
է եկել ու դուրս գնացել. դուրսը տեսնենք: Չէ
որ մենք երբ եկանք, շները կատաղութեամբ հա-
ջում էին:

—Այդպէս, դէ, ճրագ արէք, դուրսը՝ ամեն տեղ որոնեցէք:

Եօթը հոգի դուրս թափուեցին, ամեն մէկը մի մի ճրագ ձեռներին: Այնուհետեւ խուլ աղաղակ էր լսվում: Միայն դահլիճում երկու հոգի դեռ քչիչում էին:

—Հախման, Սալմանը դեռ չի եկել քաղաքիցը, որ գնացել էր մեր Հինգ ընկերաց հետ առուտուր անելու: Կարելի է նրանք լինեն եկած և դուրս են գնացել մեզ որոնելու անտառումը:

—Ոչ, նրանք այսպէս շուտ չէին գալ: դեռ երեք օր էլ կը քաշի:

—Բայց եթէ գտնենք հիւրին, սպանելու ենք, թէ պահպանելու:

—Ի՞նչ ես ասում, պատասխանեց գլխաւորը, ով որ է մեր բարեկամն է, տեսնում ես ինչպէս տունը տեղաւորել է: Վերջապէս կարծում եմ, նա հասարակ մարդ էլ չի լինիլ. երեւի հրեշտակներն են դուռը բաց արել մտցրել այս բանտի մէջ, որ ոչ մի տեղ կտրած չէ և էլի փակել են, կամ հէնց թեւերի վերայ նստացրած ուղղակի բերել են այս տունը...

—Մի՞թէ մենք այնքան արդար ենք. չէ որ մենք շատ անգամ Աստուծոյ պատուէրներին հակառակ ենք գործ տեսնում. ձիաւորներին և ալլոց թալանում ենք. ախր հրեշտակը...

—Խօսքը երկարեց, հիմի ինչպէս գտնենք հիւրին:

—Հախման աղա, արի ուրեմն վճռենք այսպէս, եթէ տղայ լինի եկողը, եղբայրացնենք. եթէ աղջիկ կամ կին լինի եկողը, քոյր համարենք: Ի՞նչ կը հրամայէք:

—Այդ իմ միտքն է, այդպէս էլ պէտք է լինի, ասաց գլխաւորը ու տեղիցը վեր թռչելով սկսեց ման ու ման անելով գոռալ:

—Ինչ ենք վեր ընկել տմարդի պէս, կարող է նա թշնամի լինել... դէ, կանչիր տղերանցը. ներքնատունը, միւս սենեակները, մառանը—մի խօսքով. ամեն տեղ քրքրեն, դռները բաց անեն, կարող է թշնամի լինել և քնելուց յետոյ՝ մեզ վնասել...

Ձահել տղամարդը դուրս թռաւ:

—Բայց, այո՛, եթէ տղայ է միակ, մեր եղբայրը կը լինի, եթէ աղջիկ՝ մեր քոյրը, մեր կռուվարիչը:

Այս խօսքերը նա այնպիսի կատաղութեամբ գոռաց, որ տունը դղրդաց և խեղճ բանտարկեալին ուշքի բերեց. նա լանկարծ պահարանի դռները բաց անելով դուրս ընկաւ: «Ձեր քոյրն եմ, աղջիկ եմ. կորած եմ...» Գլխաւորը սարսափեց, ուղեց դուրս թռչել կարծելով հրեշտակ՝ աղջկայ կերպարանքով: Աղջիկը կայծակի արագութեամբ վազելով դէպի նա՝ բռնեց նորան:

— Ուր ես գնում, իմ եղբայր. ինձ մի սպանիր, օգնիր, ազատիր ինձ...

Լուսանմանի լուսաթաթախ պատկերը գլխաւորի աչքովն ընկնելով տեղն ու տեղը մեխուեց. էլ չը կարողացաւ խօսել...

— Սնմեղ եմ, իմ եղբայր, Սստուած, երկինք... պահպանեցէք ինձ, մի սպանէք...

Լուսանմանի աչքերը արտասուաց աղբիւր դարձան:

— Մենակ ես, ընկեր ունե՞ս—Հաստ ձայնով խօսեց գլխաւորը:

— Ոչ, ոչ, մենակ եմ, որսորդները բերին այստեղ ու իրանք կտրան:

— Հը... մատը կծեց Հախմանը: Իմացայ աղջիկ, երկուսն էին որսորդները:

Իէ արի, արի մօտս, հէնց ճակատից համբուրելով, նստեցրեց իր մօտ մեծ աթուռի վերայ: Դրսից թմթմփոց լսուեց:

— Վայ, օգնիր... Լուսանմանը փաթաթուեց նորանով:

— Մի վախիլ նրանք իմ ծառաներն են, մի վախիլ... Մի խումբ քաջ տղամարդիկ ներս մտան, այդ աննման հրեշտակին, անմեղ, չքնաղ Լուսանմանին տեսնելով՝ խօսքերը կիսատ մնաց, ապշեցին ու սառած մնացին...

— Ամօթ չէր ձեզ, դուք դուրսը ոչինչ չը գը-

տաք, ահա տեսնում էք, ես սորան դտայ... Ասա՛, աղջիկս մեզ կը պատմե՞ս, թէ ինչպէս և ով բերեց քեզ այստեղ, ով է ծնողքդ և որտեղից ես:

— Ես բոլորը մի առ մի կը պատմեմ, միայն քիչ հաց տուէք, ես շատ քաղցած եմ ու բերանս ցամաքել է:

— Իէ շուտ, տղէք, ոչխար մօրթեցէք, խորոված արէք:

Տղէքը դուրս վազեցին քամու պէս:

— Ասա՛, բարի. աղջիկ, անունդ ի՞նչ է, հարցրեց աւազակապետը:

— Լուսանման ձեզ ծառայ:

— Ապրիս, շատ ապրիս. լոյսը քեզ պահապան, այսուհետեւ դու այս տան կառավարիչը կը լինես...

Հացը որ կուտես՝ յետոյ ամեն բան կը պատմես... Լաց մի լինիլ, մի հեկեկալ, սրբիւր արտասուենք:

— Չեմ կարողանում. ի՞նչ անեմ...

Թ. Գ Լ Ո Ի Խ:

Ընթերցող, այժմ մտածելու իրաւունքը ձերն է. դուք արդէն ամեն բան ըմբռնեցիք և այն՝ թէ, ինչպէս Լուսանմանը այնուհետեւ էլ չէր կարող ազատուիլ այդ պալատից, քառասուն աւագակներէից...

Այժմ մենք գնանք Շ. գիւղը: Այդ գիւղը ամբողջ շփոթութեան մէջ էր. բայց նորա մի

տունը բացառութիւն էր կազմում: Ամենքն էլ ցաւում, մտածում էին լուսանմանի պէս հրեշտակի կորստեան մասին, բայց մինը ոչինչ հոգս չը դիտէր, իր սուտ փայլմամբ թէ տղամարդի աչքն էր կուրացրել, և միւսների մէջ գրեթէ զգուանք զարթեցրել: Տունը մէկի խնամքին ու տնօրէնութեանն էր յանձնուած, տունը, հարստութիւնը, տան տղամարդը նրա ձեռքում խաղալիք էին դարձած: Ընթերցողը արդէն հասկացաւ որ նա Արեւտեսի էր: Այդ կնոջ բնաւորութիւնը մեզ շատ լաւ յայտնի է. այն ևս՝ որ ասում էին թէ, նա լուսնի զրոյցընկերն է. նա իր հպարտ բնաւորութեան բոլորքման ժամանակ զանազան սիրելի մարդկանցից կարծիքներ էր խնդրում իւր գեղեցկութեան մասին. բայց եթէ լուսինը բոլորուած էր, նրան էլ էր դիմում, կարծես չը հաւատալով մարդկանց խօսքին: Մինը՝ որ աշխատում էր կախարդիչ լինել ամենքի սրտին, հրեշտակ լինել ամենքի հոգուն, ինչ տարակոյս, որ նորա երեւակայութիւնը միշտ կը խաղար, սիրտը միշտ կը խնդար, մինչև և ճակատագրի լրջ: Այդ միներեցն էլ նա էր: Մարդու խելքը առել, գրպանն էր գրել, ուռած փքուած դիմում էր սորան, նորան: Երբ երկնքում լուսինն էր տեսնում բոլորած, Արեւտեսը նորա վերայ նայելով կարծես, ծաղր էր անում նորան, իրան աւելի գեղեցիկ համարելով: Պարտիզի մարգերի մօտ կանգնած, բոլորակամար լուսնին հարցնում էր:

«Երկնքի լուսին,
Նայիր իմ երեսին,
Ես եմ շատ սիրուն
Թէ իմ աղջիկն ու գուն:»

Թէ և լուսինը անխօս էր, բայց Արեւտեսի ականջին կարծես այս պատասխանն էր հասնում լուսնից:

— Ես չեմ քեզ նման,
Գու չես ինձ նման,
Բո աղջիկ լուսանման
Է խիտ աննման:

Արեւտեսը ինչ կը կարծէր, թէ լուսանմանը կենդանի է: Նա հաստատ համոզուած էր, որ աղջիկը այն ահարկու անտառում անշուշտ զազանների կերակուր դարձած կը լինէր: Բայց լուսնի ազգելուց իմացաւ որ նա կենդանի է և աւելի գեղեցկացած, աշխատեց հնարք գտնել տեղեկանալու և սպանել տալու նրան:...

Ժ. Գ. Ո. Ի. Խ:

Արեւտեսը մտածմունքի մէջ ընկած՝ վարսերը ծամծամելով տուն էր դառնում: Պարտիզի դրանը նա պատահեց երկու զինւորուած մարդու:

«Խնդրեմ ասէք, խանութ, այս Ե. գիւղն է:»
Հարցրեց մինը:

Խանութ խօսքը լսելով, Արեւատեսը կարծես քնից սթափուեց, հպարտութեամբ գլուխը բարձրացնելով պատասխանեց.

— Այո, թէ՛ էք կամենում:

— Այս գիւղից աղջիկ է կորե՞լ:

— Այո, կորել է, հը... թէ՛ կայ:

— Խնդրեմ յայտնէք կորած աղջկայ ծնողներին:

— Ի՞նչ յայտնենք, խօսքը կտրեց անհամբերութեամբ և տեղն ու տեղն կանգնելով:

— Յայտնեցէք, որ նորան մենք գտանք անտառումը և տարանք յանձնեցինք ձրէս պալատին, որի անունը դու լսած կը լինես:

— Ա՛յ մարդ, այնտեղ ի՞նչ գողեր ու աւազակներ են:

— Ինչ որ է ձեր գործը չէ, բայց իմացէք որ այնտեղ լաւ կը պահեն աղջկանը... խեղճը լաց լինելով խնդրեց, որ անցնելիս իրանց տանը յայտնենք, որ գնան բերեն:

— Ուրեմն նա կենդանի է, իր ծաղրալի անունը չասաց ձեզ:

— Այո, նա կենդանի է աւազակների պալատում. մենք այստեղ երկար մնալու չենք, գնում ենք. այժմ արդէն արեւը մայր է մտնում. անպատճառ յայտնեցէք նորա ծնողներին: Մեղք է, խեղճ է, նրան մենք ազատեցինք գալլերի, արջերի ճանկերից...

— Ապրէք, զօրանաք, որ բարի էք եղել, ես ճանաչում եմ այդ աղջկանը... Հապա դուք թէ՛ էիք շինում այնտեղ որ գտաք նորան:

— Մենք որսորդներ ենք. որս էինք անում այնտեղ, քիչ էր մնացել՝ հրացանով նորան էլ սպանէինք ՚րա կարծելով...

— Ափսոս, իզմուռ... Լաւ դուք գնացէք ես կը հոգամ:

Որսորդները անցան գնացին...

ՃԱ. Գ Լ Ո Ւ Խ:

Այիւրքը կանացի թույլ բնաւորութեանը շուտ է յաղթում: Կրքերի գերի կինը տգէտ է առողջապահական կանոններից. այդպիսին կարծում է թէ՛ ծնունել է միայն ուտել-խմելու, կռուելու ուրիշներին հաճոյանալու և ամենղի կորստեան պատճառ դառնալու համար...

Արեւատեսը, անգուժ կինը հէնց ներս մտաւ և ահա նրա մարդը Աւետիքն էլ եկաւ:

— Լսել եմ, այ՛ մարդս, Լուսանմանը...

— Ի՞նչ, Լուսանմանը...

— Հա նրան գալլերը կերել են:

— Ի՞նչպէս, ո՞վ ասաց:

— Երկու որսորդներ որ անց էին կենում այստեղից.

Աւետիքը հոգոց հանեց, նա որ Լուսանմանին կորցնելուց մի օր չանցած՝ տանջվում էր խղճից և զնուժ անտառը՝ որոնում լալով աղջկանը...

— Ի՞նչ կայ, ինչի սիրտդ ցաւեց.

— Սո՛ւս, կատաղեցի...

— Ի՛նչ կայ, յիմար ես: — Մարդու անսովոր գոռոցքը սարսափ ձգեց կնոջ վրայ:

— Վա՛յ, ափսոս... սկսեց տանը մոլորուած ման գալ Աւետիքը: Կինը տեսնելով մարդու սրտի փղձկանքը, ուզեց նորան հանգստացնել. ընկաւ նորա գիրկը ծիծաղելով:

— Ի՛նչ շուտ հաւատացիր, ես քեզ խաբում էի:

— Հեռի՛, ինչ էր նպատակդ խաբելու, հեռի...

— Ուզում էի քեզ փորձել, ո՞վ գիտէ նորան ալժամ ո՞վ կը լինի պատահած ու տարած... Դու գիտե՞ս, որ ես լուսնի զրոյցընկերն եմ, շուտով նորա մասին տեղեկութիւն կը ստանամ լուսնից: Բայց ի՞նչ է, եթէ գտնուի էլ, մի՞թէ պետք է բերես, պետք է հացս հարմես: Են որը պահելու գլուխ չունեմ... վերջին խօսքերը նա քթի տակին արտասանեց:

— Թո՛ղ գալերն ուտեն նորան, մեղք ու վարձքը քեզ: Դու էլ չես երկարիլ իմ տան մէջ, դու էլ կը փչանաս... Այսպէս ասաց ու ցուցամատը շարժելով դուրս գնաց:

— Ուրեմն մարդուս միտքը փոխուել է, կըմկըմաց Արեւատեսը միայնակ, ի՛նչ լաւ էր, որ սորան

խօսացրի, ի՛նչ լաւ էր որ միտքը իմացայ: Ես Լուսանմանին հէնց ձրէպումը այնպէս սպանել կը տամ, որ ոչոք չի իմանալ... կամ ով գիտէ, կարելի է գողերը արդէն սպանել են նորան...

Կինը կմկմաց, կմկմաց, ինչպէս տեսանք և իհարկէ, իր անելիքը կը վճռէր: Շուտ նա էլ դուրս գնաց:

Երկար նրան չը հետեւենք: Պետոենց տան մօտից պարզ տեսնվում էր մի ճրագ, որ լուսաւորում էր սոխախքը: Այդտեղ կանգնած էր Արեւատեսը մի մարդի և պառաւ կնոջ հետ:

— Դիտե՛ս ինչ կայ, Լալո՛ւ, ասում էր Արեւատեսը մի շիկագոյն տղամարդի, ես այս պառաւին վարձել եմ, որ իմ պատուէրս կատարի. քեզանից միայն այն կը խնդրեմ, որ սորան տանես, հասցնես ձրէպ անուանեալ ամրոցը ուր մէկ կին կայ՝ նորան խաբարս հասցնէք: Պառաւն արդէն համաձայն էլ է գնալ, բայց միայն չէ կարող:

— Շատ լաւ, մեծ ուրախութեամբ, երկու օրումը կը գնամ, երկու օրումը կը գամ: Միայն պառաւ տատիս լաւ ձի պէտք է, որ կարողանայ հետս գալ:

Ձին ես կը տամ, արդէն պատրաստ է, վրաբերեց Արեւատեսը, հապա երբ պէտք է գնաք:

— Երբ կը կամենաս:

— Հէնց էգուց առաւօտեան գնացէք, շատ շուտ որ ոչոք չը տեսնի:

— Ի՞նչ պատուէր, թէ՛նչ ասելիք ունես:
— Յետոյ կասեմ, միայն Հաստատ խօսք տո՛ւր,
գնալո՞ւ ես թէ ոչ:
— Արեւս վկայ...
— Ուրեմ ըանը վերջացաւ:

ԺԳ. Գ Լ Ո Ի Խ:

Արշալոյսը բացուեց: Շ. գիւղի վերին թաղում,
աղբիւրի մօտ, երեք հոգի, երկուսն ձիաւոր,
մէկը հետեակ քչքչում էին սատանի պէս:

— Ձեզ մատաղ, որքան կարող էք շուտ
գնացէք, ասում էր Արեւտեսը:

— Դու միամիտ կաց, այնպէս կերթանք որ
սատանան էլ չի տեսնիլ:

— Քեզ մատաղ նմնի, պատուէրս լաւ կատարիր:

— Դու միամիտ կաց, մինչև քո խնդիրը չը
կատարեմ, չեմ վերադառնալ, միայն Լալային պա-
տուիրի՛ր որ ինձ տեղ հասցնի:

— Դէ՛ գնանք ուշացանք հիմա կը լուսանայ,
վրաբերեց Լալան ձիուն ասպանդակելով և պա-
ռաւի ձիուն մտրակելով:

Մթնի մէջ կորան ձիաւորները. իսկ Արեւ-
տեսը թէ ո՛ւր վերադարձաւ՝ տո՛ւն, ալգթն, ալլ ևս
մենք չիմանանք... Սյոքանը յայտնի է, որ այնու-
հետեւ շատ անհանգիստ էր:

ԺԳ. Գ Լ Ո Ի Խ

Անցաւ երեք օր այն օրից՝ երբ աղբիւրի մօտ
ծածուկ խօսողները չբուեցին: Պալատի մօտ
այդ երեք օրումը եղանակը շատ փոփոխական

անցաւ. երբեմն անձրև էր գալիս, երբեմն ամպ
էր գոռգոռում, փայլատակում էր երկինքը, եր-
բեմն էլ պայծառ արևն էր փայլում:

Սար, ձոր կարծես ականջները սրած՝ սպասում
էին թէ վերջը Լուսանմանին թէ՛նչ պէտք է պա-
տահի:

Մեզ ծանօթ պալատից փոքր հեռու ծառերի
տակից քչփչոց էր լսվում:

— Լալա, դու այստեղ կաց, չը հեռանաս, ես
գնամ:

— Գնա, և շուտ վերջացրո՛ւ հաշիւդ, ես այս-
տեղ կը սպասեմ:

Պառաւ կողին տալով, այս ծառին, այն
ծառին դիպչելով, մի մեծ փայտ ձեռքին դիմհար
տալով, գնում էր և երբեմն յանկարծ կամ վայր
էր ընկնում, կամ կանգ առնում... Կարծես թէ
այդ պառաւը կոյր լինէր. արդարև դա կոյր էր
ձեւացել, բայց իսկապէս կոյր չէր, նա կեղծ կոյր էր:

Կախարդ պառաւը այդպէս մօտեցաւ դրան
մօտ և մի քանի բարձր աղաչական խօսքեր բացա-
կանչելուց՝ յետոյ՝ սկսեց հետևեալ երգը երգել,

որ Լուսանմանի ուշադրութիւնը աւելի շարժէր
իր վերայ:

Աշխարհը լոյս է, ինչ համար է մութ
Իմ ձայն լսողներ, շարժեցէք ձեր գութ.
Տեսէք թէ Խնչպէս կոյր են իմ աչքեր,
Բոբիկ, գլխաբան, մնացած անտէր:

Դուրս արի, խանութ,
Տես ինչ եմ երգում,
Քեզ շատ օր խնդրում
Ուրախ կեանք ուզում.
Քեզ համար ունեմ ես մի թլիսման,
Տար կեր սորանից՝ ով դու աննման,
Հրաշքով մաղած՝ հրաշքով ունցած
Մի կտոր գութ է՝ քեզ համար թխած
Դուրս արի խանութ
Տես ինչ եմ երգում:

Բայց Լուսանմանը դուրս չեկաւ: Պառաւն
էլի սկսեց:

Խանութի նման որդի ունէի,
Նա շատ սիրուն էր, գեղեցիկ, բարի.
Երկինքը գլխիս խփեց ու խլեց,
Խլեց իմ որդուն ինչ անհար թողեց:
Մայրը ինչքան էլ անգութ լինէր
Իր որդու համար կը լար, կը ցաւէր,
Ես էլ ծնող եմ ցաւերով լցուած,

Խանութ, ողորմիր թէ ունիս Աստուած...

Ելի դուրս չեկաւ, պառաւը կրկին սկսեց:

Շատ սարեր, ձորեր անցել եմ եկել

Խանութ, քեզ համար աղլուխ եմ բերել

Աղլուխ՝ թանկագին, գեղեցիկ գործած,

Որ դու փոխարէն տաս ինչ մի չոր հաց:

Թէ Աստուած սիրէք աղլուխս առէք

Ինչ կշտացրէք, մի կտոր հաց տուէք:

Լուսանմանը ցած ու նեղ պատշգամբի վերայ
կանգնած՝ լսում էր պառաւի կծկտուր ձայնը,
վերջապէս նրա սիրտը շարժուեց, հրամայեց աղա-
խիններէից մէկին, որ կանչէ պառաւին իւր մօտ:
Աղախինը ձեռքից բռնած մօտեցրեց պատշգամբին:
Լուսանմանը նրանից հարցրեց իր երգելու և լաց
լինելու պատճառը. նա պատմեց.

— Ես ունէի մի շատ գեղեցիկ աղջիկ: Աստուած
խլեց ինչանից այն իմ մխիթարիչը. բաղտ բացա-
նողը տեսնելով իմ մշտական սուգը, որ աչքերս
կուրացրեց, ինչ ասեց թէ՛ կայ մի աղջիկ Լուսա-
նման անունով, որը շատ նման է քո աղջկանը,
եթէ նորան գտնես և տեսնես, սիրտդ կը հովա-
նայ, աչքերդ լոյսն էլ տեղը կը գայ... գաթա թը-
խել տուցի և հարց ու փորձ անելով՝ եկայ քեզ
տեսնեմ և իմ սրտի կարօտն առնեմ, լոյս ստա-
նամ... Աղօթք արա՛, խանութ ջան, որ աչքերս
բացուեն, ա՛ռ, էս գաթէն կեր, նաղլու ջան, որ
աչքերս լոյս տեսնեն:

... — Խեղճ կին...

— Խեղճ եմ ես, այո՛, խեղճ եմ, երևի իմ մեղքերի համար խլեց Աստուած իմ աննման, մինուճար աղջիկը. ինձ այսպէս տանջելու համար։ Առ խանութ ջան, կեր աղաչում եմ, այս գաթէն...

— Գաթէն որ ուտեմ, աչքդ կառողջանայ — ասաց Լուսանմանը ցաւակցական ձայնով։

— Այո՛, բաղտ բացանողն ասաց, ան...

— Ոչ, նա քեզ խաբել է, իզուր ես եկել. գնա՛ Աստրծուն աղօթք արա, նա միայն քո ցաւին դարման կանի. այս ասելով Լուսանմանը առաւ պառաւի մեկնած ձեռքից գաթէն և տուեց աչքերը պըստրակին տուող մի աղախնի, որ մօտին կանգնած երեակայում էր թէ գաթէն անշուշտ մի զօրութիւն ունի։ Լուսանմանը պառաւին շատ ընծաներ տուեց, հաց, շորեր, փող և մի ժամի չափ խօսացնելուց լետոյ՝ պառաւի օրհնութիւնը ստանալով ճանապարհ դրեց։

Մի քանի քայլ արաւ պառաւը. բայց նա բոլորովին չէր կարողանում ուղիղ առանց թաւալուելու գնալ։ Ո՛հ, Տէր Աստուած, ինչ արդարաւոր եմ ես։ Մի մարդ՝ որ ուզում էր թունաւորել դատ ես։ Մի մարդ՝ որ ուզում էր թունաւորել անմեղին ինքը առաջ պատուհաս ստացաւ։ Պառաւի աչքերը արդարեւ կուրացել էին — բնութիւնը պատժեց նորան՝ իր չարագործութեան համար. նա փոխանակ դէպի դուռը գնալու, հակառակ կողմն էր գնում և վայր ընկնում...

— Վայ, ողնեցէք, խանութ...

Աղախնեցից մէկը, որի ձեռքումն էր գաթէն կոյր պառաւի նշանացի ցուցմամբ պարսպից դուրս մէկ ձիաւորի մօտեցրեց...

Պառաւը դեռ կարծում էր թէ իր աչքերը շատ փակ պահելուց չեն տեսնում. հէնց այդ կետում երբ ուզեց Լալայի հետ խօսել, նրա երեսը տեսնել, չը կարողացաւ և գոռաց, «Լալա, օգնիր, ես կուրացել եմ...» «Լալան լուրթեամբ ստուգեց նրա կուրութիւնը և ձիու վերայ դրեց՝ տխուր ու տրտում ճամփա ընկան։

Պառաւի ուղեցոյց աղախինը՝ որ շատ որկրամոլ էր՝ անհամբերութեամբ կերաւ գաթիցը. նա իսկոյն ներսից զգաց մի ցաւ... Հագիւ կարողացաւ Լուսանմանին հասկացնել, «Այս գաթէն թունաւորուած էր, ես մեռնում եմ...» և քառորդ ժամում հոգին փչեց։ Լուսանմանը շատ ցաւեց աղախնի մահուան, այդ զոհի վերայ։

— Անիծուի պառաւը, թնջ անեմ, արտասունք թափելով կմկմաց Լուսանմանը։

Միւս օրը եղբայրների ներկայութեամբ նորա մարմինը թաղել տուեց բակում մի նշանաւոր տեղ և ինչ կասկած, որ անցքը մի առ մի կը պատմէր եղբայրներին։

ԺԴ. Գ Լ Ո Ի Խ:

Պնանք այժմ Աւետիքի, Լուսանմանի հօր մօտ. նա շատ անգամ գնում էր անտառը, ուր Լուսանմանին էր կորցրել, յոյս ունենալով թէ կը գտնի նորան, բայց իզուր... Արեւատեսի վատ վարքը, իր տան տակն ու վրայ լինելը, Լուսանմանի պէս աղջկան կորցնելը— խեղճ Աւետիքին հալել, մաշել էին, կինը նորա բերանը սանձ դըրած՝ որտեղ և ինչպէս ուզում էր պտըտեցնում էր: Բայց մի այդպիսի կին նորան վիճակուել էր, կարծես, հէնց նորա համար, որ տաշէր Աւետիքի կոպտութիւնը, մեղմացնէր նրա անտաշ ու բռնի կամքը...

Բռնի ու կոպիտ մարդկանց խեղճացնել կարող է միայն կինը, կինը որ նոյնքան բռնի, նոյնքան ուժեղ, նոյնքան և աւելի խորամանկ ինչպէս աղուէս, որ հնարքներով, սիրելի է դարձնում, սրտացաւ ձևանում և իր դադառնադղի ծածուկ դորձերը թաղցնում... Մէթէ մեր գիւղերում, մեր քաղաքներում այդպիսի կախարդ ու անպիտոն կանայք չը կան... Փանի մարդիկ գերի են կանանց ձեռքում:

Աւետիքը իր տկարութեան պատճառները ոչ թէ վերաբերում էր Արեւատեսին, ընդհակառակը— նա ինքն էլ չը գիտէր թէ քնն բան էր իրան տան-

ջողը... նրան տանջողը սրտի ներսից էր, Լուսանմանն էր: Նրա սրտի, խղճի դռները բացուեցին մէկ շաբաթից յետոյ, հէնց այն օրից՝ երբ նա կորցրեց իր սիրելի գաւակին, մանաւանդ երբ մարդիկ աջ ու ձախ կողմից լանդիմանում էին, թէ դու լաւ օր չես տեսնիլ...

Աւետիքը սկզբներումը փորձ փորձեց սանձել կնոջն, բայց չը յաջողեց:

«Է՛յ, ես խօքո առաջին գերի չեմ. տեսնում ես այս դրան փակիչը, այս կրակախառնիչը»... Այսպէս էր պատասխանում կինը մարդուն և մի քանի անգամ էլ «տուր ու թմփոց» ընկաւ նրանց մէջ, բայց կնոջ կողմից մարդիկ խեղճ Աւետիքին լաւ քոթակներ ուտեցրին և սորա աչքը միանգամայն վախեցրել էին, որը սրտումն էր որոճում... Նա երբ միտն էր քցում Լուսանմանին, տեսնում էր այն ծառերը, որոնց տակ օրեր էր անցկացրել ակշիկը, տեսնում էր պարտեզը, ուր Լուսանմանը միշտ իր գիրքն էր կարդացել: Լացից մըմնջում էր. շատ անգամ էլ իր առաջուայ կնոջ գերեզմանի մօտ գալով՝ համբուրում էր ու արտասուք թափում:

Կսկիծը, դարդը, անմխիթար վիճակը նորան ստիպել էին տալիս երգով արտայայտել իր սէրը, և նա երբեմն մի կերպ էր երգում, երբեմն այլ կերպ, երբեմն էլ այս բովանդակութեամբ ողբի եղանակով—

Լուսանման ջան, քո չարը տանեմ,
Հիմի որտեղ ես, անուժիդ մեռնեմ.
Իմ օրս տարու ալէս է անցնում,
Յիշելով մեղքս և ցնդուած շրջում—
Լալում եմ, լալում...

Լուսանման ջան, մնացել եմ մենակ,
Խորթ մօրդ ձեռքում մորթուած անդանակ.
Սուրս դու էիր՝ հիմի ուր գնամ,
Թող գոնէ այստեղ գերեզմանդ գտնեմ—
Նորան համբուրեմ...

Լուսանման ջան, դառը արցունքից
Աչքս կուրացած ընկել եմ ուժից.

Զեռքս ածելով սառ քարի ծոցին

Մնացել եմ նստած, աւաղ իմ աչքին—

Դուրս դալ իմ հոգին...

Լուսանման ջան, մայրդ իմ ձեռքով

Մորթուեց անդունակ, դու էլ իմ ձեռքով

Վեր ընկար, կորար աշխարհից խռով,

Ո՛հ որքան ծանր է իմ մեղք, իմ մրմունջ—

Կտրում է իմ շունչ...

Ա՛յ դաշտ, ա՛յ անտառ, ձայնիս ձայն տուէք,

Խօսեցէք դուք էլ արձագանք տուէք,

Ես նզովում եմ իմ արարմունքը.

Ես նզովում եմ խորթ մօր վարմունքը.—

Պէտք է կսկծաք

Լալեմ իմ մեղքը:

Վերջ Առաջին մասի.

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա. Գ Լ Ո Ւ Խ

Աւանդութիւնը մեզ մի քաղաքի անուն է հասց-
նում, որ 'ի հնումն երեւելի է եղել իր
հարստութեամբ և կենդրոն իր իրաւունքին
ենթարկուած երկրի լուսաւորութեան համար: Դա
Մահլա՛ն է: Շատ աշուղներ այս քաղաքը զանազան
գեղեցիկ առասպելներով են նկարագրում, լսողին
հիացնում ու զարմացնում: Պատմում են թէ այդ
քաղաքը շինուած է եղել Շամքու գետի եզերքի
վերայ, խոր ձորում, ուր այժմ Մահլա՛ն բերդն է
գտնվում և մանաւանդ հնութիւնից փլատակուած
և մեծ մասամբ անհետացած յիշատակները... արա-
զընթաց գետը, որ սահելիս է եղել այդ քաղաքի
առաջից՝ ոռոգելով նորա հանգը անդաստանը...
և շատ բարիք է մատակարարել քաղաքին... Ահա
այստեղ, գետի մէջ բնակուելիս է եղել մի չաս-
տուածուհի, որպէս թէ Անահիտ պատմական մեծ
չաստուածուհու ստորագրեալներից մէկն էր եղել,
որ ատելով աշխարհում մնալու սկզբունքը՝ ջրի

մէջն է խորասուզուել և երբեմն երբեմն զանազան հնարքներով դուրս գալով ջրից՝ խօսելիս է եղել մարդի հետ՝ կարճ ժամանակով:

Նա, որպէս գեղեցկութեան աստուածուհի, խիստ աննման է եղել: Այս ջրային հոգին այդ քաղաքը ազատելիս է եղել նաև ամեն փորձանքներէց...

Թագաւորի միակ որդին երիտասարդ Կօնին այդ աննման չաստուածուհու սիրահարն է եղել և ամիսը մէկ անգամ որոշեալ ժամանակամիջոցում գետի եզերքին նորան մանգալիս տեսնելով՝ նրա դիւթական գեղեցկութիւնից յափշտակուելով՝ գետնի վերայ երեսն ի վայր ընկած միշտ ուշաթափուել է: Թիկնապահները չիմանալով պատճառը՝ գետի սառը ջրով ուշքի են բերել, տուն հասցրել... Այսպէս, այդ խեղճ երիտասարդը մոմի պէս հալուել ու մաշուել էր... Նորա հայր-թագաւորին անգամ հասկանալի չէր այդ ցաւի պատճառը, ըստ որում Կօնին ոչոքի չէր ասում, կարծելով թէ՛ եթէ յայտնի, էլ չի երևալ չաստուածուհին...

Կօնին լուսնոտութիւն ունի, մի քանի նախարարների աղջիկներ էլ այդպէս հաւատալով՝ չէին ցանկանում կին լինել մի լուսնոտ երիտասարդի:

Կօնինի առաջուայ մատաղ հասակին նայած՝ նա մի վայելչագէտ, քաջաբարոյ և յաղթանդամ երիտասարդ էր, բոլոր քաղաքը ամբոստում էր նորան, որ գերի էր անբուժելի ցաւի, շատ զըր-

բացներ աշխատել էին նորան ազատել լուսնոտութիւնից՝ բայց բոլորը զուր է անցկացել...

Մի կողմից Կօնինի այս ցաւը, միւս կողմից թագաւորի ծերութիւնը, երրորդ կողմից արքունեաց ներքին գործերի խառնակութիւնն ու նախարարների անմիաբանութիւնը երկրի խաղաղ կառավարութիւնը խառնել էին և աւագակների ու անօրէն մարդկանց թիւը բազմացրել, շատացրել: Ամեն ոք արհամարհում էր թագաւորի ծերութիւնը, որդու լուսնոտութիւնը և երկրի ցաւալի վիճակը. բազմութեան այս արհամարհանքից յառաջանում էր աւելի վատ հետևանք: Նախարարներից ոմանք զըզում էին ժողովուրդը և փափագում թագաւորի մահուանը, որ նրա գահը իրենք խլեն, բաժան բաժան անեն:

Թագաւորը 70 տարեկան մարդ էր: Այս մեծ մարդու երեսի ճանճը միայն իւր որդին էր քըշում. չար իշխանները փորձեցին մի քանի անգամ Կօնինի ուշաթափուած ժամանակը ձգել գետը՝ բայց անյաջող անցաւ: Այսպէս, զոգը տանու էր տանու էր ասում եմ, բայց որովհետև նա յայտնուած էր՝ որպէս լուսնոտ՝ այնքան էլ նրա վերայ ուշադրութիւն չէին դարձնում: Թէև իշխաններից մէկի աղջիկը՝ ի վերջոյ համաձայնեցաւ ամուսնանալ Կօնինի հետ, բայց նա խոյս տուեց դորանից, ըստ որում, ինչպէս գիտենք, Կօնին հոգով ու սրտով կպած էր ուրիշ էակից և կարծում էր թէ

մի օր ձեռք կը բերի նորան. նորա սէրը ջրի գեղեցկուհին էր գրաւել. ինչքան գեղեցիկ պէտք է լինէր մի ուրիշ աղջիկ, որ գերազանցէր նորան և շարժէր Կօնիսի սէրը...

Այս խեղճ թագաւորի վիճակը այսպէս երեւման մէջ էր. իր երկրի մէջ խուժը խուժը աւազակներ բռն զրած՝ ճանապարհորդներին, գիւղացիներին՝ ասպատակում էին և հանգիստ ինքնիշխան ապրում ամենաապահով տեղ—անտառների խորքերում, կարկաչահոս առուների եզերքին, կանանչ մարգագետինների վերայ...

Գիւղերը խառնեալ գրութեան մէջ էին. հարստահարութիւններ, խռովութիւններ, անօրէնութիւններ և աղետալի անցքեր անպակաս էին, մայրը նահատակվում էր մարդից. մարդը կաշկանդվում էր դժոխային շղթաներով. անմեղը մեղաւորի ձեռքն էր ընկնում, ինչպէս էր մեր սիրելի Լուսանմանը...

Ընթերցողը անշուշտ ձրէպ պնապատը յիշեց....

Բ. Գ Լ Ո Ւ Խ.

Լուսանմանը ձրէպում ապրում էր շատ տխուր. նա երբեմն մտածում էր փախչել, բայց տեսնելով ահարկու անառու որից ազատուել չէր կարող, էլի յօյսը կտրած՝ ընկնում էր ներս և այն ժա-

մանակ միայն զգում էր որ ինքը բոլորովին կորած է. չը նայելով որ վարվում էին եղբայրները նորահետ շատ լաւ: Նա տեսնելով աւազակ եղբայրների արած չարագործութիւնները, որ իրեն համար շատ նոր բաներ էին. առաջին անգամն էր, որ նա տեսնում թէ մարդիկ միմեանց սպանում են և այդ բանը նորան սարսափեցնում էր ու ամբողջ օրերով տխրեցնում, այնպէս որ մոռանում էր և տուն և տնտեսութիւն և իւր գլուխն անգամ: Աւազակները իրենց քողը ուրախացնելու համար շատ անգամ տանում էին նորան անտառը դրօսնելու: Այդտեղ նոքա արձակում էին հրացանները և որսում զանազան թռչուններ և կենդանիներ... Ահա, որսորդական շները իրենց մէջ առած քշում էին եղջերուն, որսորդները արձակում էին հրացանները և վայր ձգում կենդանուն... խեղճ կենդանին գնդակից զարնուած թաւալում էր կանանչ խոտերի մէջ և թափում իւր տաք արիւնը: Լուսանմանը այդ էլ չէր կարողանում տանել, թաշկինակը աչքերին դրած, սաստիկ հեծեծում էր և վերջումը ընկնում աւազակների ոտքերն աղաչում, պաղատում, որ կամ մի գնդակի գոհ անեն իրան և կամ եթէ արգարև ինչպէս ասում են սիրում են իրենց, քողը, որ և ճշմարիտ էր, թողնեն այդ գազանային պաշտօնը, փոխեն իւրեանց բնաւորութիւնը և իրանց մեղքը քաւելու համար այսուհետեւ պարապեն թշուառների և հարստահարեալներին օգնելով:

Աւագակները թէպէտ շատ վայրենի, կոպիտ մարդիկ են իրենց գործում, բայց լինում են այնպիսի վայրկեաններ, որ նոքա ևս զգալուն են դառնում: Ճիշտ այդպէս լինում էին Լուսանմանի խօսակցութեան ժամանակ. նոքա գլխիկոր նայում էին զետնին և նոցա առաջ պատկերանում էին իրենց արած չարագործութիւնները:

Լուսանմանի խնդիրքը, նորա հեղ խրատները և երբեմն էլ արտասուանքները սկսեցին ազդել եղբայրներին, և ո՞վ լինէր որ Լուսանմանի արտասուանքները, տխուր դէմքը ու խոր ընկած, բայց վառվռուն աչքերը տեսնելով չը համոզուէր կատարել նորա խնդիրքը: Եւ նոքա արհամարհեցին աւագակութիւնը և մարդասպանութիւնը, ուխտեցին սորանից չետոյ չարագործութիւն չանել, այլ իրենց անպիտանութեան հետքը ջնջելու համար պաշտպան լինել անօգնականներին և թշուառներին...

Այն գիւղերը՝ որ մի ժամանակ կրակումն էին մնացել նրանց ձեռքից, այժմ պահպանվում էր նրանցով, ճանապարհորդները որ մի ժամանակ առանց թալանուելու նրանցից տուն չէին վերադառնում, այժմ պաշտպանվում են իրենց արիւն ծծողներից:

Լուսանմանը տեսնելով եղբայրների այսպէս փոխուելն՝ էլ այնքան չէր մտածում իւր գիւղի մասին, շատ ուրախանում էր և իրեն երջանիկ համարում որ կարողացաւ նոցա հոգիները դժոխային կրակից ազատել...

Գ. Գ Լ Ո Ւ Խ:



Թագաւորի որդի Կօնինի վերայ, ինչպէս ասացինք, հիւանդութիւնը տիրել էր. նա սրտի մխիթարութիւնը միայն զբօսանքի մէջ էր գտնում և խոյս էր, տալիս քաղաքներից, շէներից և մինչև անգամ կեանքից, ապրելը նրա համար ոչինչ էր. նա իւր օրերի մեծ մասը անց էր կացնում որսորդութեամբ: Մէկ անգամ էլ երբ իւր հաւատարիմ իշխանի հետ գնացել էր զէպի անտառ որսի, մի եղջերու գրաւեց նորա ուշադրութիւնը և առաջից փախչելով նորան ևս հետը յառաջ տարաւ մինչև անտառի խորքը: Այստեղ թագաժառանգն իր ընկերի հետ նկատեց որ իրենք մոլորուել են անտառում: Արևն էլ արդէն մայր էր մտել:

Ահա այդ միջոցին յարձակուեցին նոցա վերայ չորս զինեալ մարդիկ և շրջապատեցին նրանց: Կօնին շփոթուած անակնկալ յարձակումից չը գիտէր ինչ անել: Վերջապէս ոգի առած՝ հանեց պատեանից սուրը, յարձակուեց աւագակների վերայ: Թէպէտ նա նոցանից երկուսին վերաւորեց, բայց ինչ օգուտ, որ միւս երկուսը յաջող ընկէ ձեռք բերելով կարողացան փոխադարձը մի գնդակի հարուածով վնասել Կօնինին, գնդակը թէ և խոր չէր թափանցել մարմնոյ մէջ, ուսադուրիւր միայն չէր թափանցել մարմնոյ մէջ, ուսադուրիւր միայն

վիրաւորած անցել էր, բայց ամբողջ օրուայ յողնածուծութիւնը նորան արենքամ արին և գետին գլորեցին: Կարելի է աւելի վտանգ յառաջ գար, եթէ անտառի խորքից չը լսուէր ձիանց ամբալիների ձայներ: Աւաղակները շտապեցին ծածկուել, փախան անտառի խորքում, իսկ Կօնինի ուղեկից իշխանը այդ դէպքից օգուտ քաղելով օգնութիւն կանչեց: Զիւաւորները մօտեցան ձայնին և սկսեցին հարց ու փորձ անել: Իշխանը պատմեց եղելութիւնը:

— Տղէք, ձեզ տեսնեմ շուտ բռնեցէք անպիտաններին, հրամայեց նոցանից մէկը իւր ընկերներին:

— Իզուր էք աշխատում, արդէն ուշ է, խնդրում եմ օգնեցէք իմ տիրոջը, որը վիրաւորուած ընկած է այստեղ:

Հինգ րոպէի մէջ հիւանդը խնամուեց, վերքերը կապեցին անձանօթները և իշխանի հետ տարան ձրէպ ամրոցը:

Դ. Գ Լ Ո Ի Խ:

Թիւերցողը անշուշտ ճանաչեց այդ մարդկանցը. դոքա Լուսանմանի եղբայրներն էին, որ տուն վերադառնալիս պատահեցին այդ անցքին: Իշխանն արդէն հէնց ճանապարհին պատմեց իրենց

ով լինելը: Հախմանը երբ իմացաւ որ նրանք հասարակ մարդիկ չեն, այլ թագաժառանգը և իւր իշխանը, շատ ուրախացաւ, որ ինքը թագաժառանգի կեանքը կարողացել էր ազատել... Տանը շուտով պառկեցրին հիւանդին Լուսանմանի պատրաստած անկողնում:

Ամբողջ գիշեր Լուսանմանը հոգում էր արքայորդու վերայ, փաթաթում էր փալասով նորա վերքը և մօտը նստած կատարում էր նորա հրամանները, իսկ նորա եղբայրները հեռու նստած խօսում էին իշխանի հետ և միեւնոյն ժամանակ շարունակ նայում էին նորան: Երկու ժամ Կօնին հանգստանալուց լետոյ, ուշքի եկաւ, բացեց աչքերը և սկսեց չորս կողմը նայել. շփոթուեցաւ. չը գիտէր երազումն էր թէ արթուն... աչքերը յառեց Լուսանմանի երեսին և ով զարմանք, իրան լսեց տանողը ոչ այլ ոք էր, եթէ ոչ՝ այն ջրային հրեշտակը, որին շատ անգամ տեսել էր ծովի ափին, նա ամբողջ մարմնով դողաց իւր սիրուհու առաջ:

— Ո՛ր եմ ես... մէթէ սա իմ հօր արքունիքն է. Ո՛ր է հայրս... մայրս... վերջապէս կմկրմաց նա:

— Ո՛չ. արքունիքում չէք, այլ ձեր ծառայ Հախմանի տանը, որը ազատեց ձեզ աւաղակների ձեռքից. հանգիստ եղէք, պատասխանեց Հախմանը:

— Ո՛րը, Հախմանի տանը, սարսափահար ճիչ արձակեց Կօնին և իւր ընկերը, Հախմանի...

քառասուն աշխարհաւեր մարդակերների գլխաւորի....

—Այո՛, Տէր, խոստովանում եմ, նոյն ինքն իւր ահուելի ընկերների հետ այժմ առաջիդ կանգնած է. Հախմանն է, որ ազատ թողած իր արեւելեր արհեստը, իւր քաջ ընկերներով սար ու ձոր ոտքի տակ տալով ոչ թէ առաջուայ պէս մարդիկ որսալով է սլարապած, այլ անտէր և անօգնականներին նեղութիւնից ազատելով: Բայց լսիր տէր, եթէ չը լինէր մեր այս պաշապան հրեշտակը, մեր աննման քոյրը, որը ամբողջ գիշեր քո վերքերը կապելու և քեզ խնամելու հոգսումն էր: Եթէ չը լինէր ասում եմ սա, դու քո ընկերով քեզ վերաւորողներից ազատուելուց յետոյ մեր սրին գոհ կերթայիր:

Կօնին լռեց. նա յիշեց մի քանի ժամուան առաջ պատահածը անտառում: Նա մոռացաւ ամեն բան տեսնելով Լուսանմանին, որ շատ մեծ խնամքով լուսանում, փաթաթում էր իր վերքը: Նորա սէրը աւելի բորբոքուեց. այն ջրային հրեշտակը, որի միայն երեսն էր կարողանում տեսնել, այժմ՝ մօտը նստած՝ պաշպանում էր իրեն: Մի կողմից սիրոյ բորբոքումը, միւս կողմից վերքի նեղացնելը բոլորովին հանգիստ չէին տալիս Կօնինին:

Լուսանալու մօտ էր, հիւանդը փոքր ինչ լաւ զգաց իրան, ուստի ամենքը քաշուեցին իրենց տեղերը: Նրա մօտ մնաց միայն իշխանը, որը նոյնպէս

շատ անհանգիստ էր: Այդ գիշեր Կօնին ձրէպում անցկացրեց, առաւօտը զարթնելուց յետոյ Լուսանմանը մտաւ նորա սենեակը, հարցրեց վերքի որպիսութիւնը և իսկոյն ջուր բերեց լուացուելու:

Երեք օր Կօնին մնաց ձրէպ ամրոցում. այդ երեք օրումը նա վայելում էր Լուսանմանի քաղցրը խնամքը. շատ կարելի է, երբեք էլ չէր ուզում նրանից հեռանալ, եթէ ծնողաց սէրը և անհանգրստութիւնը չը լինէր:

Սիրտը կոտրած երեք օրից նա բաժանուեց աղջկանից, իւր հետ պաշար առնելով մատուցարանի վերայ նորա բերած սերը, կարագը և մեղրով հացը:

Երբոր ձիանքը բերին, Լուսանմանի այտերի վերայ երևացին արտասուքի կաթիլներ և նա ինքն էլ չը գիտէր թնջու... Կօնին պինդ պինդ սեղմելով նրա ձեռքը, խոստացաւ միշտ գալ նորա մօտ. այս խօսքերը ասում էր նա ցած: Հեծան ձիերը, նոցա առաջնորդում էին Լուսանմանի քառասուն եղբայրները:

Ե. Գ. Լ. Ո. Ի. Խ:

Իրիկնապահ էր. թագաւորի որդի Կօնին արքունի պալատի բարձր պատշգամբում դարսած աթոռների վերայ երբեմն նստում, երբեմն կանգնում, երբեմն միջնափայտի վերայ կռնում

էր ձեռքը ճակատին տանելով նայում էր քաղաքի հորիզոնին, փողոցներում բազմաթիւ ժողովրդի գնալ գալուն, կառքերի թխկթխկոցը, արհեստաւորների չըխկչըխկոցը, զուարճասէր երիտասարդների հարայ-հրոցը լսում. և այսպիսի հազար ու մի երևոյթ նորա սրտին հազար ու մի տպաւորութիւն էին տալիս և ինքն իրան այդ ամենի տէրն ու իշխանը համարելով՝ միեկթարվում ու փառաւորվում էր... Անց ու դարձ էին անում շատ գեղեցկադէմ աղջիկներ, երևում էին շատ կանայք ու հարսներ. բայց այդ միջոցին ձեռքը դէպի ճակատն էր տանում. ախ, հառաչանքը դուրս էր մղվում նորա ներսից, նորան ստիպում էր նստել աթոռին և կրկին կռնել: Առասանմանն էր որ այդ միջներում նա յիշում էր և թմրում... Արդեօք, սէրը չար ու բարի կը հարցնէ...

Այդպէս թմրած, մտախոհութեան մէջ էր Կօնին երբ մօտեցաւ մայրը և նորա լայն ճակատից համբուրելով նստեց նորա մօտ դրած նստարանի վերայ: Նա տեսնելով որդու տխուր և դռնատ դէմքը, սիրտը տակն ու վերայ եղաւ, նստարանը մօտեցրեց նորան և սկսեց խօսել նորա հետ:

— Սիրելի որդի, այս քանի անգամ է, ես քեզ տեսնում եմ այդպէս մտատանջութեան մէջ. թնչ է քո դարդը. մէթէ ծածկում ես մօրիցդ որ իւր կեանքը քեզ համար ունի պահած:

— Ոչ, սիրելի մայր, անհանդիստ մի լինիր,

ես ոչինչ չունեմ, միայն այսօր փոքր ինչ գումարս ցաւում է:

— Ձէ, որդի, քո ցաւը գլխացաւ չէ, այլ ինչպէս տեսնում եմ, քոնը մտքի ցաւ է, որ տանջում է քեզ... մի ծածկիր մօրիցդ որ քո լաւն է ուզում, մէթէ քո տխրութիւնը ինձ աննկատելի է մնում, մի խոցոտիր իմ սիրտը քո տխրութեամբ, պատմիր ինչ ունես սրտումդ, ես պատրաստ եմ քո բոլոր ցանկութիւնները կատարել:

Կօնին սիրտ առնելով մօր խօսքերից, ծռնկի վերայ դառնով չոքեց մօր առաջ:

— Մայր, մի յանդիմանիր տկար որդուդ, որը սիրում է մի աղջկայ, իր ազատիչների քրոջը, խօսեց Կօնին յուզուած ձայնով, զրէյէ խեղտուած:

Մայրը ձեռքից բռնեց կանգնեցրեց Կօնին:

— Դու միամիտ կաց որդի, քանի ես կամ քո ցանկութիւնը անկատար չի մնալ, ես կը խօսեմ հօրդ հետ և յոյս ունիմ որ նա չի մերժիլ քո ցանկութիւնը, դու դարդ մի անիր...

— Շատ ապրիս, բարի մայր, ես ցանկանում որ դու էլ տեսնես այն հրեշտակին:

Թազուհին վերկացաւ տեղից և բարի գիշեր մաղթելուց յետոյ՝ զնաց թաղաւորի սենեակը Կօնինի մասին խօսալու: Իսկ Կօնին քաշուեց իւր սենեակը. երկար ժամանակ նա ման էր դալիս ձագը կորցրած թռչունի պէս: Վերջապէս նա մանդալուց ձանձրանալով պառկեց անկողնում, բայց

այնտեղ ևս Հանգիստ չէր. նա տատանվում էր այն մտքով՝ թէ արդեօք ինչ վճռուեցաւ իւր վիճակի մասին: Կէս գիշերն անցել էր: Ամեն մարդ լալկացել, թմրել էր: Փաղաքի մութ թաղերում առաջին անգամ աքաղաղները կանչում էին: Ահա, այս միջոցին Կօնին Հագիւ աչքը կայցրեց և քնի մէջ էլ երազներով ընկաւ, ծովի ջուր, ցամաք, և ինչ ասես որ նորա վառ երևակայութեան առաջ չէր պատկերանում... Այս տանջանքը նորան քառորդ ժամ Հանգիստ քուն չը տուեց և նա կարծես ահաբեկուած կրկին զարթնեց: Արդէն լոյս էր, արեգակը Հորիզոնից բարձրացել էր. փողոցների մէջ լսվում էր ամբոխի աղաղակները: Կօնին շտապով հագնուեցաւ և սպասում էր մօրը:

2. Գ Լ Ո Ւ Խ:

 Կօնին սենեակի մէջ ման էր դալիս երբ նորան ներս կանչեցին Հօր մօտ: Նա իսկույն ներկայացաւ Հօրը: Բոլորը լուռ սպասում էին, թէ ինչ պէտք է խօսէ թագաւորը:

Սիրելի որդի, ասաց նա. ես լսեցի որ դու կամենում ես ամուսնանալ, միայն մի աննշան աղջկայ Հետ, ինձ ուրախալի է քո վճիռը, բայց լաւ չէր լինի մեր իշխանների աղջիկներից ընտրես, քան թէ անտառի մէջ բնակուած վայրենի աղջկանը:

— Ո՛չ, հայր... չեմ կարող, ես արդէն ուխտել եմ..

— Ի՞նչ, որդի, հակառակում ես, մի՞թէ քո հայրը լաւդ չէ ցանկանում, դու պէտք է ընտրես այնպիսին որ արժան լինի թագուհի կոչմանը, մանաւանդ ես նրա ընտանիքի մասին տեղեկացալ ու նրա եղբայրները եղել են մի շատ չարագործներ: Ամօթ չէ մեզ համար այդպիսի աւագակների տանից հարս բերենք:

— Ո՛չ հայր, այժմ նրանք ամենաազնիւ մարդիկն են, թէպէտ առաջ եղել են աւագակներ, բայց հիմա իրենց քրոջ խրատներով թողել են աւագակութիւնը և պաշտպանում են դիւղացիներին յարձակուող աւագակներից. ինչպէս ինձ ազատեցին և մենք ոչինչ շնորհակալութիւն չարեցինք: Թագաւորը երկար մտածելուց յետոյ՝ ասաց:

— Ուրեմն դու կամենում ես, որ մեր շնորհակալութիւնը յայտնենք նորանով, որ նրանց քրոջը մեզ հարս բերենք... Թո՛ղ այդպէս լինի.

Կօնին տեղից վեր ցատկելով համբուրեց Հօր և մօր ձեռքը:

3. Գ Լ Ո Ւ Խ:

 Ենք գիտենք, որ Լուսանմանի սիրտը նոյնպէս կպել էր Կօնինից: Նա լուսամուտի առաջ նստած գործում էր իւր ձեռագործը, գլուխ բարձրացնելով յանկարծ տեսաւ մի քանի իշխաններ, որ ամրոցի դրան մօտ իջնում էին ձիերից, նա

կարծեց թէ Կօնին է, որ խոստացել էր շուտ շուտ այցելելու իրեն, շտապով թողեց գործը և վազեց պատշգամբը: Նա տեսաւ միայն Կօնինի իշխանին մի քանի իշխանների հետ: Լուսանմանը համեստութեամբ ներս ընդունեց նորանց, հրամայեց աղախնին որ ջուր բերի լուացուելու, իսկ ինքը գնաց նախաճաշիկ պատրաստելու. մինչդեռ նա իւր պատրաստութեան հետ էր, ահա և եկան եղբայրները սովորականից շատ շուտ: Նոքա տեսնելով թագաւորի իշխաններին իրենց տանը, զարմացած հարցնում էին միմեանց թէ. «Ինչ պատճառով են եկել սրանք»:

Լուսանմանի եղբայրները ներկայացան իշխաններին, սիրով ընդունեցին նրանց, որ իրենց ներկայութեամբ պատուել են նոցա: Երբ բերեցին նախաճաշիկը, յետ քաշուեցին և ասացին.

— Մենք եկել ենք այստեղ մեր թագաւորի պատուէրը կատարելու. մինչև մենք չը կատարենք մեր պարտականութիւնը չենք ուտիլ ձեր հացը:

— Հրամայեցէք, մենք պատրաստ ենք մեծ թագաւորի հրամանը կատարել, վրաբերեց չախմանը:

— Պատրաստ ենք կատարելու թագաւորի հրամանը, աղաղակեցին մի քանիսը:

— Սիրելի բարեկամներ, թագաւորը մեզ ուղարկելով յայտնում է իւր շնորհակալութիւնը, որ դուք աղատել էք նորա միակ որդու կեանքը և այն՝ որ մեր թագաժառանգը տեսնելով ձեր քրոջը

սիրահարուել է նորա վերայ և ցանկանում է նորա հետ երջանիկ ապրել. ուստի թագաւորը խնդրում է տաք նորան իւր որդուն, յոյս ունենալով որ չէք մերժիլ մեծ թագաւորի խնդիրքը:

Եղբայրները շփոթուեցան և չը գիտէին ինչ պատասխանեն: Վերջապէս խօսեց չախմանը:

— Մենք թէպէտ սրտով ուրախ ենք, բայց մեզ արժան չենք համարում թագաւորի խնամի լինել, և մեր քոյրը թագուհի:

— Բայց իմացէք, որ մեր թագաւորը շատ ուրախ է իւր որդու ընտրութեան վերայ, նա հասարակ գիւղացիներին հարուստ քաղաքացիներից աւելի է գերադասում:

Վերջապէս նոքա չը կարողանալով այլ ևս ոչինչ պատասխանել ասացին.

— Հարցնենք մեր քրոջը, իմանանք նորա համաձայնութիւնը:

Լուսանմանին արդէն ամեն բան յայտնի էր, նա դրան յետեից լսում էր նրանց խօսակցութիւնը: Երբ նրան կանչեցին նա չը գիտէր ինչ պէտք է պատասխանէ: Եղբայրները յայտնեցին քրոջը իշխանների գալու պատճառը, Լուսանմանը կարմրեց և ոչինչ չէր խօսում:

— Համաձայնում ես, հարցրին եղբայրները:

— Ձեր բոլորի կամքն է...

— Արդէն մենք մեր կողմից տուել ենք մեր համաձայնութիւնը, հիմա սպասում ենք քո համաձայնութեան:

Լուսանմանը գլուխը կախ քցեց, ամօթը նորան թույլ չէր տալիս համարձակ խօսելու: Վերջապէս երբ Լուսանմանի համաձայնութիւնը ստացան ոտքի կանգնեցին և գոռացին. «Կեցցէ թագաւորը, կեցցէ թագաժառանգը և թագուհին.»

Իշխանները նախաճաշելուց լետոյ շտապեցին որքան կարող են շուտ ուրախացնել թագաժառանգին:

Ը. Գ Լ ՈՒՆ:

Սուաւօտ էր. պայծառ արեւը փայլում էր կապուտ երկնակամարի վերայ, գետնի երեսը ծածկող կանաչն ու հազարագոյն ծաղիկները երանութիւն էին մատակարարում Շամլու քաղաքին: Այսօր սովորականից դուրս ամենքը ուրախ տրամադրութեան մէջ էին, սար, քով, դաշտ յայտնում էին իրենց ուրախութիւնը գեղեցիկ գոյնզգոյն ծաղիկներով, և թռչուններն էլ իրենց հազար ու մի ծլվղոցով....

Այդ միջոցին անտառով անցնող կառքերի անիւների գլորգոցը, հրացանների որոտումը, ձիանց սմբակների ձայները ներդաշնակում էին բնութեան գեղեցկութեան հետ: Մեր քոյր Լուսանմանը Կօնինի հետ միասին արքայական փառահեղ կառքի մէջ ընթանում էին անտառի միջով, իւր եղբայրների, իշխանների և մի գունտ զինւորների հետ: Մեր

նորապսակները քաղաքը հասնելուն պէս դիմաւորեցին նրանց ամբողջ քաղաքի ժողովուրդը «կեցցէներով»: Ժողովրդի բազմութեան միջով հազիւ կարողանում էր անցնել նորանց կառքը: Պալատի դրան մօտ դիմաւորեցին թագաւորը և թագուհին: Թագաւորը տեսնելով Լուսանմանի գեղեցկութիւնը, որ աւելի էր գեղեցկացել, ապշած մնաց:

— Ահա լոյս, գեղեցիկ ընտրութիւն, կմկմաց ծերունի թագաւորը բռնելով Լուսանմանի ձեռքը և համբուրելով նորա գեղեցիկ ճակատից, ասաց. — Այսուհետեւ երջանիկ կապրես իմ որդու հետ, երկուսդ էլ շատ ապրիք և ուրախ: Հրամայեց աշխատաւորներին վարձատրել և բանտարկեալներին ազատութիւն պարգևել այս մեծ անգին ուրախութեան համար:

Եօթն օր եօթը գիշեր հարսանիք կատարեցին: Թագաւորը Լուսանմանի եղբայրներին մեծամեծ պարգևներ տալով իշխաններ նշանակեց:

Եղբայրները աւելի և աւելի սիրեցին Լուսանմանին՝ որ նա եղաւ նրանց աւագակութեանից ազատելու և մեծամեծ մարդիկ դառնալու պատճառը...

Թ. Գ Լ ՈՒՆ:

Լուսանմանի ամուսնութիւնից լետոյ մէկ շաբաթ անցաւ: Աւելորդ է նկարագրել թէ քանի աղախիններ փառքով ու պատուով ծառա-

յում էին Լուսանմանին, թէեւ ինքն երբեք չէր ուզում իր նման կանանց ծառայացնել: «Ես ինձ ծառայ եմ, մըմնջում էր նա, դու քեզ, միւսը իրան և ամենքն էլ բաղտաւոր կը լինեն, ուրիշին ծառայեցնելը պարտականութիւն չէ»: Բայց՝ ամուսինը նորա լայն ու խելահաս ճակատից համբուրելով՝ հասկացնում էր աշխարհի բանը և թագուհի կոչման նշանակութիւնը: Գեղջկական սովորութիւնով նա սրտանց ուզում էր իր մեծերի ոտները լուսնալ, սեղանը բաց անել, սուփրա քցել և ալլն և ալլն, բայց հանգամանքը ներում չէր: Որովհետեւ գեղջկական կեանքին, ապրուստին և ալլ մանրամասնութեանց ինքն ամենատեղեակ էր, ինչ որ խօսելիս լինէր ամուսինը Լուսանմանը խօսքը կտրում՝ իսկոյն խօսում յայտնում էր իւր գիտեցածը. գիւղերի դրութիւնը նա նկարագրում էր և ալդպիսով յորդորում, որ միշտ անաչառ քննիչներ, դատաւորներ և հաւատարիմ աստիճանաւորներ դրուին նրանց. նա ասում էր, ամենամեծ և հռչակաւոր թագաւորն էլ անբաղտ է, եթէ ժողովուրդը աղքատ է և սորա ու նրա ձեռքին խաղալիկ... Նա աչքերը լցնելով ասում էր շատ անգամ, թէ գիւղացիները այժմ այնքան նզովում, անիծում չը լինեն մեզ էլ, չը գիտեմ. որովհետեւ շատ պարտք ու պատուհասի մէջ են և մի թեթեւութիւն չէք տալիս նրանց... Սլապիսով նա իր ամուսնու ուշադրութիւնը ձգում էր աղքատ ու անտէր գիւղա-

ցիւների վերայ. բայց երբ նորանից ամուսինը հարցնում էր ծնողաց տան, գիւղի մասին, այն ժամանակ սա միայն լալիս հեկեկում էր, երբեք խորթ մօր մասին ոչինչ չէր ասում...

Ծերունի թագաւորը հրաւիրելով իր իշխաններին իր մեծ դահլիճը, կանչեց իր որդուն և Լուսանմանին: Ոչ ոք չը գիտէր նորա ասելիքը: Ամենքն էլ նստած նայում էին նորա կնճռոտ դէմքին: Վերջապէս խօսեց —

«Սիրելիք, ես այսօրուանից կատարում եմ իմ ուխտը: Ես արդէն ծերացել եմ և մահս մօտ է. ես ուզում եմ վերջին օրերս հանգստութեամբ անցկացնել աղօթքով և մաղթանքով: Մինչև այսօր իմ որդին իմ թիկունքս էր, դուք իմ հաւատարիմ աջակիցները: Այսուհետեւ իմ թագաւորութիւնս յանձնում եմ իմ որդուն: Հնազանդեցէք սորան և ալդպէս էլ յայտնեցէք, որ այսօր մեր օրէնքով տօնուրի: Լուսանմանն էլ ճանաչուի որպէս օրինաւոր կին իմ որդուն և կոչուի թագուհի: Ես իմ ձեռքով արքայական մատանին դնում եմ որդուս մատը: Այս իմ ընտանեկան իրաւադրութիւնը թող պաշտօնական ձև ստանայ և հրատարակուի ամեն տեղ: Այս էր ահա իմ ասելիքը: Բայց և դու որդի, չը մոռանաս քո Աստուածը, լաւ տէր լինես երկրիս վերայ, յաղթող լինես թշնամուդ դէմ, սուրդ կտրուկ լինի ամեն դեւերի և վիշապների դէմ: Վարձատրիր առատութեամբ արժանաւորաց, պա-

տժիր խիստ կերպով մեղաւորաց, բայց լաւ քննելուց լետոյ: Մեր նախնական օրէնքը սրբութեամբ պահպանիր:

Այժմ հրամայում եմ փողերը հնչեցնել...“

Թագաժառանգութիւնը նոյն օրը հրատարակուեց երկրի մէջ: Ամենքն էլ նոր փոփոխութեանց, նոր բարիքների էին սպասում նոր թագաւորից: Եւ արգարեւ նոր թագաւորը իր եռանդուն աշխատութեամբ և բարեգործութեամբ շատ սիրելի եղաւ ժողովրդին: Նա Լուսանմանի խորհրդով ամենից առաջ աշխատեց ամեն կերպ նպաստել զիւղական ժողովրդի գրութեան բարւոքման ու յառաջադիմութեան գործին: Լուսանմանի հետ նա այցելում էր գիւղերը, ամենահետընկած տեղն անգամ գնում էր. բայց հասարակ ճանապարհորդի շորերով...

Ժ. Փ Լ Ո Ւ Խ:



Բաղտը այսպէս էր տնօրինել մեր Լուսանմանի համար: Լուսանմանը զգում էր, որ բաղտաւորութեան պատճառը եղել է խորթ մայրը: Նա ուզում էր փոխարէնը հատուցանել, նա զգում էր որ խեղճ հայրը խորթ կնոջից լաւ օր չի տեսնելու: Լուսանմանը մի անգամ քսակը լցրեց ոսկով ու արծաթով հօրը ուղարկեց՝ առանց իր ուլ

լինելը իմաց անելու, բայց տանողը յայտնեց, որ այդ անունով մարդը արդէն չարաչար չքաւորութեան մէջ նորերումս վախճանել է:

Լուսանմանը շատ ցաւեց, շատ արտասուեց բայց թնչ կարող էր անել: Այս դառը տխրութեան մէջ՝ նա բաց արեց իր սիրտը իւր ամուսնու առաջ. պատմեց մի առ մի զլիխ անցքը... Ամուսինը, որ մինչև այժմ կարծում էր թէ արգարեւ նա աւագակների իսկական քույրն է, այժմ բանի էութիւնը հասկանալով, աւելի սիրեց Լուսանմանին և նորանով էլ զիւղական կեանքը... Ըստ որում իր սիրելին այդ կեանքիցն էր առած, այդ կեանքում ծնուած ու սնուած... թագաւոր ու թագուհին շուտ այցելեցին Լուսանմանի հայրենիքին և այդ գիւղի անունը փոխելով Լուսանման հրատարակուեց: Լուսանմանը երկար ժամանակ իր հօր անշուք գերեզմանի վերայ ընկած լալիս էր. նրա մէջ զարթնել էին այդ միջոցում մանկական տպաւորութիւնները, որ ստացել էր իր ընկերներից, մարդկանցից, այգիներից ու կենդանիներից: Նա հրամայեց իր ծնողաց գերեզմանների վերայ մատուռ կանգնացնել և ըստ արժանւոյն արձանադրել գերեզմանաքարերը: Նա վարձատրեց իր վաղեմի ծառայողներին: Արեւատեսը ամօթից գետինն էր մտնում, ահից և երկիւղից սարսափում. նա մտել էր մի ծակ, աղուէսի պէս մարաղ մտել, այլ ևս չէր ուզում դուրս գալ: Թագուհին չէր մոռացել նրան,

Հարց ու փորձ անելով գուրս բերել տուեց նորան
և փոխանակ պատժելու ոսկով լիք քսակ նուիրեց,
որ իր համար առանձին ապրի ուրիշների դռները
չընկնի: Մի խօսքով նա յայտնուեց որպէս թա-
գուհի, երկրի տէր և ամենքին էլ մէկ մէկ ընծա-
ներ տուեց: Հասարակութիւնը զարմացել յափըշ-
տակուել էր. շատերը չէին ուզում իրենց աչքերին
հաւատալ, բայց իրողութիւնը ճիշտ էր:

Լուսանման գիւղը աւելի ծաղկեց, աւելի մե-
ծացաւ ու հարստացաւ և տեղական աշուղները
թագուհու վերայ այս երգն էին յօրինել և երկար
ժամանակ երգում էին:

Լուսանմանի շնորքով մեր գիւղերը բար-
ւոքուեցան,

Լուսանմանի շնորքով գիւղական կեանքը
պարզուեցաւ,

Մեր ցաւերն ու հոգսերը անհետացան,

Մեր հարկերն ու բեզեարը թեթեւացաւ:

Շատ ապրի գեղջկուհին

Մեր մայր թագուհին:

3963

3964

3965

3966

<< Ազգային գրադարան



NL0030734

<< Ազգային գրադարան



NL0030733

<< Ազգային գրադարան



NL0030732

<< Ազգային գրադարան



NL0030731

3967
3968
3969
3970

